16 ՀՈԿՏԵՄԲԵՐ 2015 ՈՒՐԲԱԹ 38(5390)

# ԱԶԳ
Azg

ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ-ՔԱՂԱՔԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾԱԿԱՆ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

ISSN: 1829-1651

## «Ոտքի, Հայաստան» նախաձեռնությունը էլ չի նստի

«Ոտքի, Հայաստան» քաղաքացիական կամ կիսաքաղաքական նախաձեռնությունը հայտարարել է, որ դադարեցնում է Հանրապետության հրապարակում 80 օր տեւած իր նստացույցը՝ ընդդեմ նախ հոսանքի սակագնի բարձրացման, ապա՝ այս իշխանությունների:

Նախաձեռնությունից նաեւ հայտնել են, որ նստացույցի պաստառները փոխադրվելու են «Նոր Հայաստան» նոր նախաձեռնության գրասենյակ, որին եւ միացել է «Ոտքի, Հայաստան» նախաձեռնությունը:

Ժյուլ Վեռնը մի գիրք ունի՝ «Աշխարհի շուրջը՝ 80 օրում»: Սա հիշեցինք, որովհետեւ ցանկանում էինք պարզել, թե ինչ կարելի է անել 80 օրում, եթե չխառնենք շարժումը գործողության հետ:

Հ. Ա.

*ՕՐԵՐԻ ՀԵՏ*

## Հայկական սկեպտիցիզմը եւ հանրաքվեն

**Որոշված է՝ դեկտեմբերի 6-ին ժողովուրդը գնում է քվեարկության, հանրաքվեի: Գնում է՝ «այո» կամ «ոչ» ասելու փոփոխված կամ բարեփոխված Սահմանադրությանը: Գնում է՝ առանց իմանալու, գոնե այս պահի դրությամբ, թե ինչի՞ն է կողմ կամ դեմ քվեարկելու: Կհասցնե՞ն «Այո»ի կողմնակիցները մինչեւ դեկտեմբերի 4-ը, այսինքն մինչեւ քարոզչության համար սահմանված ժամկետի ավարտը, քաղաքացիներին հասկանալի, մարդկայի՛ն լեզվով բացատրել, թե ի՞նչն է փոխվելու Սահմանադրության մեջ, մինչ այդ հոգ տանելով հասկացնելու նաեւ, թե այսօր, 2005 թ.ից ի վեր, ի՞նչ Սահմանադրությամբ է կառավարվում երկիրը, դեռ չխոսելով այն մասին, թե մինչեւ ա՛յդ ինչ Սահմանադրություն էր գործում Հայաստանում:**

**Վերեւում ասացի՝ մարդկայի՛ն լեզվով բացատրել: Նկատի ունեի ոչ թե հայերենը, այլ հայավարի՛ լեզուն: Այսինքն այն լեզուն, որը գործածում է մեր ժողովուրդը տանը, տրանսպորտի մեջ, շուկայում կամ խանութում– ի՞նչն է փոխվելու իր կյանքում, ինչպե՞ս, եւ ինքը ի՞նչ քյար է ունենալու դրանից:**

**Սա՝ «Այո»ականների մասով:**

**Ավելի նախանձելի կամ նախընտրելի չի լինելու «Ոչ»ականների վիճակը: Նրանք էլ չեն կարող մարդավարի, ավելի ճիշտ՝ հայավարի՛ բացատրել հասարակ քաղաքացիների կրելիք վնասները բարեփոխված Սահմանադրությունից: Նրանց համար է՛լ ավելի դժվար է լինելու բացատրելը, թե ինչո՞ւ եւ ինչո՞վ է նախընտրելի գործո՛ղ Սահմանադրությունը, որը փորձելու են պահպանել «Ոչ»ականները, նույնիսկ նրանք՝ ովքեր 2005-ին «Ոչ» էին ասել այժմ գործող Սահմանադրությանը: Մանավանդ նրանք՝ որ ի վերուստ տրված առաքելություն ունեն միշտ «Ոչ» ասելու ամեն ինչի...**

**Մնում է մեկ ելք, որը իրականում ոչ թե ելք է, այլ՝ փակուղի, ինչի մեջ գտնվում ենք անընդհատ, արդեն 24 տարի– քվեարկողները բաժանվում են երկու հակադիր խմբերի. մի խումբը դիրքավորվում «Այո»ի խրամատներում, մյուս խումբը՝ «Ոչ»ի: Եվ... կռվեցեք, տղեք, կռվեցեք քաջ-քաջ: «Այո»ի խրամատներում դիրքավորվածները դարձյալ կրկնելու են, թե իրենք միշտ ճիշտ են, միշտ ուժեղ ու միշտ հաղթող, իսկ «Ոչ»ի խրամատներում գտնվողները կրկնելու են այն՝ ինչ շարունակ են կրկնել. «սրանց» Սահմանադրությունը մեզ պետք չէ, «սրանց» ոչ մի բանը մեզ պետք չէ, դա դավադրություն է, դիվերսիա, որպեսզի... Եվ... կռվեցեք տղեք, կռվեցեք քաջ-քաջ:**

**Անշուշտ, կլինի նաեւ, ինչպես միշտ, մի երրորդ խումբ, իսկակա՛ն եւ հավիտենական սկեպտիկների խումբը, որը կասի. «Մեզ պետք չէ որեւէ Սահմանադրություն, մեզ պետք է ղեկավարեն ուրիշներ, անպայմա՛ն դրսից: Այդպես է եղել, այդպես էլ կգնա»:**

**Եվ ամենավտանգավորը դրանք են՝ բո՛ւն սկեպտիկները: Նրանք միշտ ոտքով են քվեարկում: «Եթե դրսինները չեն գալիս մեզ ղեկավարելու, ուրեմն մե՛նք գնանք նրանց մոտ՝ ղեկավարվելու» տրամաբանությամբ:**

ՀԱԿՈԲ ԱՎԵՏԻՔՅԱՆ

ԱՆԱՀԻՏ ՀՈՎՍԵՓՅԱՆ

## Եթե Փերինչեքին իրավացի են ճանաչում, ուրեմն աշխարհում արդարություն չկա

Մարդու իրավունքների եվրոպական դատարանի Մեծ պալատը հոկտեմբերի 15- ին հրապարակեց «Փերինչեքն ընդդեմ Շվեյցարիայի» 2015-ի հունվարի 28-ին Ստրասբուրգում կայացած դատալսմանը հաջորդած վճիռը, որով հաստատեց ստորին պալատի՝ 2013 թվականի դեկտեմբերի17-ին հրապարակած վճիռը, այն է՝ շվեյցարական դատարանը իրավացի չի եղել Հայոց ցեղասպանությունը ժխտող Դողու Փերինչեքին քրեական պատասխանատվության ենթարկելով: Ասել է, թե դատարանը խախտել է Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի 10- րդ հոդվածը՝ սահմանափակելով Փերինչեքի խոսքի ազատության իրավունքը:

Շվեյցարական ռադիոն առաջինը հաղորդեց լուրը՝ «Ցեղասպանությունն ուրացող Փերինչեքը հանիրավի է դատապարտվել»: Տխուր իրականությունը վերնագրում առկա է, նաեւ՝ վերաբերմունք կա: «Ի հեճուկս Շվեյցարիայում գործող հակառասիստական օրենքի, արտոնված է Հայոց ցեղասպանության ուրացումը, ՄԻԵԴ- ի վճիռը թուրք ազգայնական Դողու Փերինչեքին իրավացի է ճանաչում », հաղորդում է շվեյցարական ռադիոն:

Եթե Փերինչեքին իրավացի են ճանաչում, ուրեմն աշխարհում արդարություն չկա, սա իմ հոգու ճիչն է, իրավաբան չեմ, բայց Ստրասբուրգում հունվարի 28-ին ձայնագրել եմ նրան, հանձնել «Ազգի» ընթերցողների դատին, տեսել եմ, թե Գերմանիայում նրան կուռք դարձրած թուրք ազգայնամոլները Թալեաթ փաշայի նկարներն ուսած, պատմությունը կեղծող գրքույկներով ինչպես են մաղձ թափում: Հայաստանում թուրքական ժխտողականությունը պատմությունից գիտեի, իսկ հիմա ոչ միայն կարդում եմ, այլեւ տեսնում առիթից առիթ: Հռոմի պապի ապրիլի 12- ին մատուցած պատարագից հետո թվում էր Եվրոպան ունկերում դեռ պահպանելու է այդ օրվա բանաձեւը: Դատարանն իհարկե տաճար չէ, բայց դատավորներից, մարդկանցից բաղկացած կառույց է, ուրեմն կենդանի տաճար, որ հեռու կամ մերձ է բարոյականության , արդարության սկզբունքներին:

Հետեւենք, թե 17 դատավորներից բաղկացած ՄԻԵԴ Վերին պալատն ինչպես է քվեարկել: 10: 7 հարաբերակցությամբ պատկերը խորհելու առիթ է տալիս. դատարանի մինչեւ հոկտեմբերի վերջ պաշտոնավարող նախագահ Դին Շփիիլմանը (Լյուքսեմբուրգ), Յոզեփ Քասադեվալը (Անդորրա), Իզաբելլե Բերրոն (Մոնակո), Վինսենթ Ա դե Գաեթանոն (Մալթա), Լինոս Ալեքսանդրե Սիցիլիանոսը (Հունաստան), Յոհաննես Սիլվիսը (Նիդեռլանդներ), Էգիդիյուս Քյուրիսը (Լիտվա) կողմ են քվեարկել Շվեյցարիայի որոշմանը, նրանցից Սիլվիսը, Քասադեվալը, Բերրոն եւ Քյուրիսը արտահայտել են նաեւ լրացուցիչ տարակարծություն: Փերինչեքի ազատ խոսքի իրավունքը պաշտպանել են դատավորներ Մարկ Վիլլիգերը (Լիխտենշտեյն), Կարակաշը (Թուրքիա), Յան Շիկուտան (Սլովակիա), Հիրվելան (Ֆինլանդիա) Անդրե Փոթոկին (Ֆրանսիան), Հելլեն Քելլերը (Շվեյցարիա), Հելենա Յեդերբլոմը (Շվեդիա), Ալեշ Փեյչալը (Չեխիա), Ֆարիս Վեհաբովիչը (Բոսնիա-Հերցեգովինա), Գերմանիան ներկայացնող դատավոր Անգելիկա Նուսբերգերը մասամբ կողմ, մասամբ դեմ է եղել:

Սա 73- ամյա դժվար տեղաշարժվող Փերինչեքին այժմ առավել աշխույժ կդարձնի: «Ազգի» ընթերցողներին արդեն ծանուցել ենք, որ մինչ դատարանի վճիռը, նա Քյոլնում մայիսի 23- ին արդեն հանդիպել էր Եվրոպայի թուրք երիտասարդաց դաշինքի հետ, իսկ ոստիկանությունը չէր սահմանափակել հավաքը՝ պատճառաբանելով, թե ոչ մի հիմք չի տեսնում: Այժմ այսպիսի երթերն ու հավաքները ոչ միայն առավել զանգվածային կլինեն, այլեւ՝ նոր կեղծիքներով հղի:

Մեր գործընկերները՝ մասնավորապես tert.am-ը վերնագրել էր «Փերինչեքը հաղթեց Շվեյցարիային, բայց պարտվեց Հայաստանին»՝ նկատի ունենալով, որ «Հայոց ցեղասպանության մասով ոչ հայանպաստ մի շարք ձեւակերպումներ վճռից հանվել են կամ խմբագրվել Հայաստանի օգտին, այսինքն՝ Հայոց ցեղասպանության փաստը կասկածի տակ չի դրվում»:

⇨4

ՄԱՐԻԵՏԱ ԽԱՉԱՏՐՅԱՆ

## Արա Աբրահամյանն ուզում է Հայաստանում իրականացնել իր ծրագրերը

Լրացավ Ռուսաստանի հայերի միության 15-ամյակը: Այդ առթիվ տեղի ունեցող ամփոփիչ հանդիպում-հաշվետվությունների եզրափակիչ փուլն է Հայաստանում, երեկ էլ Հայֆիլհարմոնիայի «Արամ Խաչատրյան» համերգասրահում կայացավ հանդիսավոր միջոցառում եւ համերգ՝ նվիրված ՌՀՄ հիմնադրման հոբելյանին: Իսկ երկու օր առաջ Գիտությունների ազգային ակադեմիայում ՌՀՄ նախագահ Արա Աբրահամյանը հանդես եկավ ՌՀՄ աշխատանքն ամփոփող ասուլիսով, որը լրագրողների քաղաքական հետաքրքրասիրության շնորհիվ հարցուպատասխանի մասում վերածվեց Աբրահամյանի քաղաքական ծրագրերի բացահայտման: Հիշեցնենք, որ օրեր առաջ Ա. Աբրահամյանին ՌՀՄ 15-ամյակի կապակցությամբ շնորհավորել էր ՌԴ նախագահը՝ նշելով այս կազմակերպության ավանդը ազգամիջյան հարաբերությունների ներդաշնակեցման գործում եւ տարբեր ոլորտներում կատարած դրվատելի աշխատանքը: Նույն առթիվ միությանն ու նրա անդամներին շնորհավորել էր Հայաստանի նախագահը՝ նշելով, թե ՌՀՄ-ի ստեղծումը նշանակալի քայլ է դարձել Ռուսաստանի հայ համայնքի համախմբման եւ այդ երկրում ապրող հայերի ազգային ինքնության պահպանման ճանապարհին, առանձնակի ընդգծելով ՌՀՄ նախագահ Արա Աբրահամյանի ջանքերը, ով, ըստ նախագահի, շատ բան է անում երկու եղբայրական պետությունների միջեւ բազմակողմ կապերի հետագա ամրապնդման համար:

Նախորդել էր հոկտեմբերի 10-11-ին Մոսկվայում կայացած ՌՀՄ 5-րդ համագումարը, որը եւս 15-ամյակի միջոցառումների ամփոփում էր, եւ որտեղ վերստին ՌՀՄ նախագահ է ընտրվել



Արա Աբրահամյանը: ՌՀՄ գործունեության մասին ավելի մանրամասն կարելի է տեղեկանալ ՌՀՄ կայքից, որը կարելի բացել նաեւ «Ազգի» կայքէջի հղումով, իսկ մենք վերադառնանք ԳԱԱ-ում կայացած ասուլիսի քաղաքական մասին, որն այս երկու օրը բավական բուռն քննարկումների արժանացավ և՛ ԶԼՄ-ներում, և՛ սոցիալական ցանցերի տիրույթում:

Ա. Աբրահամյանը, պատասխանելով լրագրողների հարցերին նշել էր, որ կուզենար Հայաստանը տեսնել ժողովրդավար, զարգացած ու անկախ մի երկիր, այդ ուղղությամբ ծրագրեր ունի, որոնց հասնելու համար ճանապարհ է կողմնակիցներով կուսակցություն ստեղծելն ու խորհրդարանական ընտրություններին մասնակցելը:

⇨4



**Հայկական ջարդերի եւ Հայոց ցեղասպանության իրականացման մեջ Քրդական գործոնի դերակատարման մասին**

էջ 7,8



**Ծովում ԱՄՆ-ի տիրապետությունը թերեւս հարցականի տակ է**

էջ 10

AZG NEW SHABAT 1.QXD 15/10/2015 22:25 Page 2



# Պրահայի Սուրբ Հոգի եկեղեցին փոխանցվեց հայ համայնքին

*Կարդինալ Դուկան բանալին հանձնեց Հայր Բարսեղին*



Պրահա-ՕՐԵՐ- Հոկտեմբերի 11-ին Պրահայի Սուրբ Հոգի կաթոլիկ եկեղեցին փոխանցվեց Հայ առաքելական եկեղեցու Սուրբ Գրիգոր Լուսավորիչ ծխական համայնքին՝ անժամկետ օգտագործման համար: Պատմական այս իրադարձությանը ներկա էր Չեխիայի կաթոլիկ եկեղեցու առաջնորդ, կարդինալ Դոմինիկ Դուկան, ում շնորհիվ էլ իրականություն դարձավ չեխահայերի ցանկությունը: Վերջին տարիների ընթացքում Հայ առաքելական եկեղեցու Չեխիայի հոգեւոր հովիվ Բարսեղ վարդապետ Փիլավչյանի եւ կարդինալ Դուկայի միջեւ հաստատված ջերմ հարաբերությունները նպաստեցին բանակցությունների ավարտին եւ տվեցին իրենց դրական արդյունքը:

14-րդ դարում կառուցված Սուրբ Հոգի եկեղեցու փոխանցման արարողությունը սկսվեց ժամերգությամբ, գոհաբանական աղոթքով, որին մասնակցեցին Հայր Բարսեղը, Կենտրոնական Եվրոպայում հայրապետական պատվիրակ Տիրան վարդապետ Պետրոսյանը եւ Հայկ սարկավագ Ութիջյանը:

Ժամերգությունից հետո, կարդինալ Դուկային շնորհակալանքի խոսք ասաց Հայր Բարսեղը, նշելով, որ եկեղեցու հանձնումը քրիստոնեական սիրո ու եղբայրության արտահայտություն էր: Հայր Բարսեղը ներկա հավատացյալներին կոչ արեց այսուհետ իրենց աղոթքներով լցնել եկեղեցին եւ զորացնել: «Եկեղեցին միայն պատերը չեն, այն պետք է պահենք, պահպանենք եւ հոգ տանենք մեր միասնական ջանքերով», ասաց նա: Կենտրոնական Եվրոպայում հայրապետական պատվիրակ Տիրան վարդապետ Պետրոսյանը շնորհավորելով չեխահայ համայնքին, նշեց, որ Ամենայն Հայոց կաթողիկոս Գարեգին Բ-ի շնորհակալանքներն ու բարեմաղթանքներն է փոխանցում կարդինալ Դուկային եւ նոյեմբերի 3-ին նրան սպասում են Մայր աթոռ Սուրբ Էջմիածնում: Նա մաղթեց, որ այսուհետ եկեղեցու Սուրբ հոգին ուղեկցի հայ հավատացյալ համայնքին եւ հայությունն իր ամենօրյա աղոթքներով լցնի այս եկեղեցին:

Հայաստանի դեսպան Տիգրան Սեյրանյանը նույնպես շնորհակալություն հայտնելով չեխ ժողովրդին եւ կարդինալ Դուկային՝ փոխանցեց Հայաստանի կառավարության շնորհավորանքները: Նա նշեց, որ չեխահայ համայնքի, եկեղեցու եւ պետության հավաքական ջանքերն ի վերջո տվեցին նման դրական արդյունք: Միեւնույն ժամանակ նա նշեց, որ հայությունն այնպես է դրսեւորել իրեն, որ արժանացել է նման վստահության չեխ եկեղեցու կողմից, եւ այժմ մեծ պատասխանատվությամբ պետք է հոգ տանել եկեղեցուն, ոչ միայն պահելով, այլեւ շենացնելով:

Այնուհետեւ ներկաներին ողջունեց եւ շնորհավորեց Չեխիայի կաթոլիկ եկեղեցու առաջնորդ կարդինալ Դոմինիկ Դուկան: Նա անդրադարձավ հայ եկեղեցու եւ հայության քրիստոնեական ժառանգությանը, այն ողբերգությանը, որ 1915 թվականին տեսել է հայ ժողովուրդը, ինչի մասին վկայել է նաեւ պրահայաբնակ գրող Ֆրանց Վերֆելը: Կարդինալը նաեւ նշեց, որ այս օրը տոն է բոլորի համար, եւ շնորհավորեց չեխահայությանը այս առիթով:

Ելույթի ավարտին կարդինալ Դուկան եկեղեցու խորհրդանշական բանալին հանձնեց Հայր Բարսեղին: Ներկաներին իբրեւ օրվա հիշատակ բաժանվեցին նաեւ փայտե խաչեր:

Արարողությանը ներկա էին Չեխիայի հոգեւոր դասի ներկայացուցիչներ, խորհրդարանի պատգամավոր Մարեկ Բենդան, հայ համայնքի բազմաթիվ ներկայացուցիչներ: Եկեղեցում ներկա հայերը ուրախությամբ շնորհավորում էին միմյանց եւ մոմավառությամբ աղոթում:

Նշենք, որ հայերը Պրահայում երբեւէ եկեղեցի չեն ունեցել, բայց վերջին 10 տարիներին բոլոր եկեղեցական արարողությունները կատարվում էին հայ հավատացյալ համայնքին տրամադրվող Պրահայի կաթոլիկ Սուրբ Յիլիի եկեղեցում:

Սուրբ Հոգի եկեղեցին գտնվում է Պրահա 1 թաղամասի Dušní 1083/7 հասցեում:

«ՕՐԵՐ»

# Ջուրը չտեսած...

**ՅԱԿՈԲ ՄԻՔԱՅԷԼԵԱՆ**

**Շուկայի մէջ հանդիպեցայ հալէպահայ հին ծանօթի մը. սովորական բարեւէն ու որպիսութիւնը հարցնելէն ետք, բնականաբար պիտի հետաքրքրուէի իր զբաղումով: «Կ՛երթամ կոր»,- ըսաւ: «Ո՞ւր»,- հարցուցի: «Հալէ՛պ»,- ըսաւ: «Խե՞ր,- ըսի,- ինչո՞ւ կ՛երթաս»: «Վերջացաւ,- ըսաւ,- վերջացաւ. ռուսերը կը մաքրեն կոր, վաղը պատերազմը կը կենայ, երթանք ալ տուներնիս, տեղերնիս գտնենք, ազատինք այս գաղթականի վիճակէն»:**

**Մարդը այնքան համոզուած կը խօսէր, որ չուզեցի «Դեռ կանուխ է այսպիսի եզրակացութեան հասնելու, քիչ մը համբերէ, տեսնենք ինչ պիտի ըլլայ...», ըսելով իր խանդավառութեան ջերմաստիճանը նուազեցնել:**

**Ասիկա մէկ օրինակն է, որ ինծի հանդիպեցաւ: Ով գիտէ, քանիներ իրեն պէս կը մտածեն եւ արդէն աչքերնին հեռատեսիլին՝ ճամբորդական պայուսակները վար կ՛իջեցնեն պահարանին վրայէն ու անոնց փոշին կ՛առնեն, պատրաստուելով վերադարձի:**

**Վերադարձի՛: Թող տարօրինակ չթուի, ոչ ալ անմիջապէս քննադատելու թող ելլեն մարդիկ, թէ «ա՞յս էր ձեր հայրենասիրութիւնը, հայրենիքը պանդոկ-հիւրանո՞ց է, թէ՞ ժամանակաւոր գաղթակայան»:**

**Սփիւռքահայուն արարքները քննադատելէն մինչեւ զանոնք ծաղրելու պատրաստ գրչակներ կան, որոնք առիթի կը սպասեն իրենց մատիտները սրած: Բայց ինչո՞ւ, ինչո՞ւ այս վերաբերմունքը, ինչո՞ւ չեն կրնար հարցին մակերեսէն անդին անցնիլ ու խնդրին էութեան հասնիլ, մարդոց հոգեվիճակը ըմբռնել:**

**Հարիւր անգամ պէտք չկայ կրկնելու. մարդ որքան ալ հայրենասէր ըլլայ, իր ու իր ընտանիքին ապրուստի ծախսերը պիտի հոգայ, չէ՞, եկեր է ու տարիէ մը ի վեր գործ կը փնտռէ եւ չի գտներ. դանակը ոսկորին հասած է, ու բնական է, որ ամենաբարակ շիւղէն իսկ կախուի չխեղդուելու համար: «Ամենաբարակ շիւղը» այս պարագային ռուսական յուսադրիչ գրոհներն են, որոնք վերջ պիտի դնեն Սուրիոյ պատերազմին ըստ շատերու եւ մասնաւորաբար յուսահատութեան մէջ ինկած սուրիահայերու:**

**«Այս թանը դեռ շատ ջուր կը վերցնէ», պիտի ըսեն մեծերը. Դեռ արդիւնքը յայտնի չէ, ամբողջ Միջին Արեւելքը տակնուվրայ է, Պաղեստինէն մինչեւ Իրաք, մինչեւ Թուրքիա եւ անշուշտ Սուրիա:**

**Կ՚ըսեն Հայաստան 15-17 հազար սուրիահայ կայ, այսինքն մօտ 4-5 հազար ընտանիք, որոնցմէ շատեր արդէն երեք տարի է այստեղ են: Առանց քանի՞ տոկոսը ինքնաբաւ է ու առանց աշխատելու կրնայ տարիներով դիմանալ: Քանի՞ տոկոսը աշխատանք ունի ու կրնայ ապրիլ իր եկամուտով: Մանրամասն հաշուելու կարիք չկայ. վստահ եմ, որ անոնց քանակը 30%-ը չ՛անցնիր, այսինքն անդին մեծ տոկոս մը կայ, որ կը քաշքշուի իր խնայած դրամով, բարեսիրական հաստատութեանց նպաստներով ու արտերկիր գտնուող ազգական-բարեկամներու նուէրներով: Վերջը՞...**

**Վերջը այս պիտի ըլլայ, պիտի շալկուին ու վերադառնան, Հալէպի կարօտով, ռուսէն կախուած յոյսերով, թէ՞ այլ, սակայն երբեք հայրենասիրութեան պակասէն:**

**Մի զարմանաք եւ մի այպանէք, եթէ դիմատետրին (facebook) կամ մամուլի մէջ կարդաք Հալէպի կարօտով գրուած յուզումնախառն տողեր, ոչ միայն Հայաստանէն, այլեւ Լիբանանէն, Եւրոպայէն, Ամերիկայէն, Աւստրալիայէն... Գուցէ չըմբռնէք, սակայն պիտի հասկնաք, թէ ինչո՞ւ հալէպահայերը այդքան կապուած են իրենց քաղաքին. կապուածութիւն մը, որ աւելի մագնիսական կը դառնայ, երբ այստեղ շատ դռներ ու շատ տրամադրութիւններ կը փակուին իրենց դիմաց:**

**«Պիտի վերադառնամ» ըսողին ուզածիդ չափ «ջուրը չտեսած մի՛ բոպիկնար» ըսէ, միեւնոյնն է, պիտի բոպիկնայ... մերկանալէ առաջ:**

# Լոս Անջելեսի Արշակ Տիգրանյան վարժարանը փակվել է

Ժամանակներն իրենց կամքը թելադրում են, ստիպելով սփյուռքում հայկական ժառանգությունների պահպանմանը ծառայող հաստատություններին դիմագրավել առավել դժվարին ու ծանր մարտահրավերներ: Կրթական հաստատությունները, դրանց մեջ, ամենախոցելին են:

Թեքեյան մշակութային միության Մ. Նահանգների եւ Կանադայի կենտրոնական վարչությունից ստացված հաղորդագրությունը տեղեկացնում է, որ համայնքի առաջնորդների եւ վարժարանի հոգաբարձուների խորհրդի հետ խորհրդակցական քննարկումների արդյունքում որոշվել է, ցավ ի սիրտ, փակել Լոս Անջելեսում գործող Արշակ Տիգրանյանի վարժարանը:

Հանգուցյալ Արշակ Տիգրանյանի առատաձեռն բարերարությամբ ԹՄՄ-ի կողմից 1981-ին հիմնադրված վարժարանը Հոլիվուդում (Կալիֆոռնիա) ընդարձակել էր իր գործունեությունը ակադեմիական ամուր գիտելիքներ հաղորդելով 500-ից ավելի շրջանավարտների, որոնք այսօր հպարտությամբ են հիշում վարժարանի տնօրենության եւ ուսուցչական կազմի հոգատարությունն ու նվիրվածությունը իրենց գործին:

Շրջանի ժողովրդագրական փոփոխությունների հետեւանքով աշակերտության թվի նվազումը ժամանակի ընթացքում աստիճանաբար նվազեցրել են նաեւ վարժարանը կանգուն պահելու ֆինանսական միջոցների հայթայթումը, ինչի հետեւանքում ԹՄՄ-ն ստիպված է եղել փակել այն եւ վաճառել 1200 Քահուենգա Բուլվար հասցեում գտնվող դպրոցական տարածքը:

«Վարժարանի փակումը, սակայն, չի նշանակում կրթական առաքելության ավարտ», նշված է հաղորդագրության մեջ, որ նախատեսում է աշխատանքային հանձնախմբեր ստեղծել եւ կրթական ծրագրեր մշակել ստեղծված նոր պայմաններին համապատասխան:

Խոստանալով շարունակել Լիբանանում, Հայաստանում եւ Արցախում գործող Թեքեյան դպրոցների հովանավորությունը, ԹՄՄ-ն, սույն հաղորդագրությամբ, իր երախտագիտությունն է հայտնել բոլոր այն անհատներին եւ հաստատություններին կամ կազմակերպություններին, որոնք սատարել են Տիգրանյան վարժարանի կայացմանն ու նրա 34 տարիների առաքելության իրականացմանը: Նրանց թվում են վարժարանի հոգաբարձուների խորհուրդը, տնօրենության եւ ուսուցչական կազմի անցյալի եւ ներկայի անդամները, աշակերտների ծնողները, որոնք վստահել են վարժարանին, Հայ եկեղեցու արեւմտյան թեմի առաջնորդներ Վաչե արք. Հովսեփյանը եւ Հովնան արք. Տերտերյանը, որոնց հովանու ներքո է գործել վարժարանը, Տիգրանյան ընտանիքի անդամները, որոնք մինչեւ վերջ մնացել են վարժարանի կողքին, եւ վերջապես ՀԲԸՄ-ն, Գյուլբենկյան, Լինսի եւ Ջորջ Իգնատիոս հաստատությունները, առանց որոնց շարունակական օժանդակության հնարավոր չէր լինի վարժարանը կանգուն պահել:

Հ. Ծ.

# Մանկավարժական եւ Վանաձորի պետական համալսարանները 4 տարով ինստիտուցիոնալ հավատարմագրում ստացան

**Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանին եւ Վանաձորի Հովհ. Թումանյանի անվան պետական համալսարանին 4 տարի ժամկետով ինստիտուցիոնալ հավատարմագրում շնորհվեց: Այսօր կայացած նիստում նման որոշում կայացրեց «Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամի հավատարմագրման հանձնաժողովը:**

**Յուրաքանչյուր բուհի համար տեղի ունեցավ առանձին քննարկում, որտեղ հավատարմագրման գործընթացն իրականացրած փորձագիտական խմբի ղեկավարը ներկայացրեց բուհի ուժեղ եւ թույլ կողմերը, փորձագիտական խմբի տված խորհրդատվությունները եւ գնահատականը բուհի՝փորձագիտական զեկույցում նշված թերությունների վերացման գործողությունների ծրագրին:**

**Հավատարմագրման կարգի համաձայն, 4 տարով հավատարմագրում ստացած բուհերը երկու տարին մեկ պարբերականությամբ պետք է ինստիտուցիոնալ ներքին գնահատում իրականացնեն եւ արդյունքները ներկայացնեն ՈԱԱԿ:**

**Ինստիտուցիոնալ հավատարմագրումը պետության կողմից ուսումնական հաստատության կրթական եւ որակի ապահովման գործընթացների, մասնագիտությունների կրթական ծրագրերի պետական կրթական չափորոշիչներին եւ ինստիտուցիոնալ հավատարմագրման չափանիշներին համապատասխանության ճանաչումն է: Այն պարբերաբար իրականացվող պարտադիր գործընթաց է մասնագիտական ուսումնական բոլոր հաստատությունների համար:**

**Ավելի վաղ ՈԱԱԿ հավատարմագրման հանձնաժողովը ինստիտուցիոնալ հավատարմագրման մասին որոշում էր կայացրել եւս 13 բուհերի վերաբերյալ՝մեկին շնորհելով հավատարմագրում 6 տարի ժամկետով, ութին՝4 տարի ժամկետով, երկուսին՝ պայմանական ինստիտուցիոնալ հավատարմագրում 2 տարի ժամկետով, երկուսի հավատարմագրումն էլ մերժել էր:**

AZG NEW SHABAT 1.QXD 15/10/2015 22:25 Page 3



# Իրանը ցանկանում է Պարսից ծոցը կապել Սեւ ծովին Հայաստանի միջոցով

ԱՐԱ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

Երբ խոսվում է Հայաստանի եւ Իրանի անկեղծ ու բարեկամական հարաբերությունների մասին, ակնհայտ է, որ խոսքը ավանդական բաժակաճառերի մասին չէ եւ ոչ էլ դիվանագիտական էթիկայի: Դրանք տարբեր կրոններ դավանող եւ քաղաքական համակարգեր ունեցող պետությունների միջեւ հարաբերությունների օրինակելի տարբերակ են աշխարհի այլ երկրների համար: Ասվածի հերթական վկայություններից էր Իսլամական Հանրապետության նախագահի առաջին տեղակալ Էսհաղ Ջահանգիրիի գլխավորած պատվիրակության այցը Հայաստան եւ ձեռք բերված պայմանավորվածությունները մեր երկրների միջեւ:

**Առաջին կոնկրետ արդյունքը Հայաստան-Իրան բարձրավոլտ էլեկտրահաղորդման 3-րդ գծի կառուցման աշխատանքների վերսկսումն է**: **Ըստ Հայաստանի վարչապետ Հովիկ Աբրահամյանի, այդ աշխատանքները կավարտվեն համաձայն սահմանված ժամանակացույցի` 2018 թվականին: Էսհաղ Ջահանգիրին**, խոսելով այս ծրագրի մասին, տեղեկացրեց, որ այն որոշ ժամանակահատվածում ունեցել էր դժվարություններ, բայց «գործադրած ջանքերի արդյունքում» վերսկսվել է եւ կավարտվի ժամանակին: Նոր էլեկտրահաղորդման գիծը հնարավորություն կտա ընդլայնել երկու երկրների միջեւ էլեկտրաէներգիայի փոխանակումը:

**Երկրորդ կարեւոր պայմանավորվածությունը Մեղրի ՀԷԿ-ի կառուցման վերաբերյալ է**: Այս նախագծի շինարարությունը տարիներ շարունակ կյանքի չէր կոչվում Իրանի հանդեպ ԱՄՆ կիրառած պատժամիջոցների պատճառով: Տեղեկացնենք, որ նախատեսվում է կառուցել երկու ՀԷԿ` հայկական եւ իրանական կողմերում: Շինարարությունը պետք է ֆինանսավորի իրանական կողմը, իսկ հայկական կողմը իր մասնաբաժնի դիմաց պետք է փոխհատուցի ՀԷԿ-ի արտադրած էլկերաէներգիայով: Այսինքն, կկիրառվի նույն սխեման, որը իրագործվում է Իրան-Հայաստան գազատարի դեպքում: Իրանական կողմի ներդրումները արտադրած էլեկտրական էներգիայով փոխհատուցելուց հետո, ՀՀ տարածքում կառուցված ՀԷԿ-ը կսկսի էլեկտաէներգիա արտադրել Հայաստանի սպառողների համար: Պատկերացում կազմելու համար այդ ՀԷԿ-ի հզորությունների մասին, նշենք, որ այն կարող է ապահովել Հայաստանի էներգետիկ պահանջների մոտ 5 տոկոսը:

Բացի սրանից, իրանական կողմը նախատեսում է Իրանի հետ սահմանակից բնակավայրերում` Մեղրիի տարածաշրջանի գյուղերում գազաբաշխիչ ցանց կառուցել, որի վերաբերյալ համաձայնագրին վերջերս հավանություն տվեց Հայաստանի կառավարությունը:

Խոշոր ռազմավարական այնպիսի ծրագրեր, ինչպիսիք են Իրան-Հայաստան երկաթուղին եւ ներկայումս կառուցվող Հյուսիս-Հարավ ավտոմայրուղին եւս քննարկվել են իրանական բարձրաստիճան պատվիրակության հետ: Էսհաղ Ջահանգիրին այսպես է մեկնաբանել այս նախագծերի շուրջ քննարկումները. «**Համոզված ենք, որ տարածաշրջանային մյուս երկրների հետ համագործակցության շրջանակում կկարողանանք Պարսից ծոցը կապել Սեւ ծովին**»: Միանշանակ է, որ երկաթուղին տարածաշրջանային նշանակության նախագիծ դառնալու դեպքում, ավելի իրատեսական կդառնա նրա կառուցման հնարավորությունը: Իրանի առաջին փոխնախագահը նաեւ հետեւյալն է ասել. «Ունենք Հյուսիս-հարավ ճանապարհային միջանցքը, **պետք է լուծենք նաեւ երկաթգծի կառուցման հարցը, որը տարածաշրջանային նշանակություն կարող է ունենալ**»: Ըստ Իրանի պատվիրակության ղեկավարի, այս համատեքստում Հայաստանը կարեւոր դերակատարում ունի տարանցիկ գոտի լինելու առումով:

# Գնաճի զսպման գերկարեւորումը տնտեսական աճի խոչընդոտ

### *Նախկին ԽՍՀՄ երկրներից գնաճն Հայաստանում ամենացածրն է*

Հայաստանում գնաճի մակարդակը ամենացածրն է նախկին ԽՍՀՄ երկրների համեմատությամբ: Այդ երկրների ազգային վիճակագրական ծառայությունների, Արժույթի միջազգային հիմնադրամի տվյալների համաձայն, որոնք հրապարակվել են ՀՀ ազգային վիճակագրական ծառայության կայքում, **2015-ի օգոստոսին հուլիսի համեմատ** Հայաստանում գնաճը կազմել է 0,1 տոկոս, այն դեպքում, երբ Ռուսաստանում այն կազմել է 0,4 տոկոս, Բելառուսում` 0,2 տոկոս, Ղազախստանում եւ Ղրղզստանում` 0,3-ական տոկոս, Մոլդովայում` 2,9 տոկոս, Վրաստանում` 1 տոկոս, Տաջիկստանի տվյալները բացակայում են, իսկ Ուկրաինայում գրանցվել է 0,8 տոկոս գնանկում: Սակայն Ուկրաինայում վերջին տարիներին գնաճի ցուցանիշները ահռելի են, որոնք երեւում են դեկտեմբերի համեմատ այդ երկրում գնաճի ցուցանիշներից:

Այսպես, եթե **դեկտեմբերի համեմատ Հայաստանում օգոստոսին արձանագրվել է 2,1 տոկոս գնանկում**, ապա Ռուսաստանում` 9,8 տոկոս գնաճ, Բելառուսում` 7,8 տոկոս, Ղազախստանում` 1,8 տոկոս, Ղրղզստանում` 0,1 տոկոս, Մոլդովայում` 8,2 տոկոս, Տաջիկստանում` 3,2 տոկոս գնաճ, իսկ ահա Ուկրաինայում` 38,2 տոկոս: Վրաստանի վերաբերյալ այս տվյալը բացակայում է:

**2014-ի դեկտեմբերին էլ 2013-ի դեկտեմբերի համեմատ** Հայաստանում արձանագրված 4,6 տոկոս գնաճի դիմաց Ռուսաստանում գնաճը կազմել էր 11,4 տոկոս, Բելառուսում` 16,2 տոկոս, Ուկրաինայում` 24,9 տոկոս, Ղազախստանում` 7,4 տոկոս, Ղրղզստանում` 10,5 տոկոս, Մոլդովայում` 4,7 տոկոս, Տաջիկստանում` 7,4 տոկոս եւ միայն Վրաստանում` 2 տոկոս:

Ի՞նչ են ասում վերոնշյալ ցուցանիշները, բացի նրանից, որ գնաճի մակարդակը մեր երկրում այս տարվա առաջին ութ ամիսներին ամենացածրն է եղել թվարկված երկրների համեմատ:

Նախ փաստենք, որ այս ցուցանիշները ինքնին վկայում են, որ բնակչության մոտ ձեւավորված տեսակետները Հայաստանում բարձր գնաճի մասին, իրականությանը չեն համապատասխանում: Խնդիրը թերեւս այլ է, շատերի եկամուտներն են ցածր ներկայումս ձեւավորված գների համեմատ: **Ինչն էլ լուծելի է ոչ թե գները անփոփոխ պահելու, այլ բարձր տնտեսական աճի պարագայում միայն:** Ներկայումս Հայաստանում 12 ամսյա գնաճի ցուցանիշը գտնվում է ԿԲ սահմանած 4 տոկոս +- 1,5 տոկոս միջակայքից էլ ցածր: Մասնավորապես, այս տարվա սեպտեմբերին նախորդ տարվա սեպտեմբերի համեմատ գնաճի ցուցանիշը 3,3 տոկոս է:

**Շուկայական հարաբերությունների պարագայում գներն անփոփոխ մնալ չեն կարող**: Ճիշտ է, Կենտրոնական բանկի գլխավոր պարտականությունը գնաճի զսպման քաղաքականություն իրականացնելն է, բայց դա չի նշանակում պետության կողմից գների ամրագրում, ինչպես սովետական տարիներին էր տեղի ունենում: Այսինքն, այսպես թե այնպես գները փոփոխվելու են եւ առավելապես դեպի վեր, հատկապես զարգացման ներկա փուլում գտնվող Հայաստանի համար: Այսինքն, ելքն այստեղ ջանքերն ավելի շատ տնտեսական աճի ապահովման վրա կենտրոնացնելն է, այլ ոչ թե գների նման ցածր մակարդակը պահպանելը, որը ոչ միայն չի նպաստում տնտեսական աճին, այլ խանգարում է նրան: Հետեւաբար ժամանակն է, որպեսզի Կենտրոնական բանկը ավելի ընդլայնողական քաղաքականություն վարի եւ նվազեցնի վերաֆինանսավորման տոկոսադրույքը, որն այժմ 10,25 տոկոս է:

Անցած տարվա այս ժամանակահատվածում վերաֆինանսավորման տոկոսադրույքը 6,75 տոկոս էր, տարեսկզբի 7,5 տոկոսի դիմաց: Դեկտեմբերյան արժեզրկումն ու բարձր գնաճը ԿԲ-ին ստիպեց խստացնել դրամավարկային քաղաքականությունը, եւ տոկոսադրույքը դեկտեմբերին բարձրացվեց մինչեւ 8,5 տոկոս, հունվարին` 9,5 տոկոս, փետրվարին` 10,5 տոկոս, որը անփոփոխ մնաց մինչեւ օգոստոսի փոքր-ինչ թուլացումը` 10,25 տոկոս: Այսինքն, թանկացնելով փողի արժեքը, Կենտրոնական բանկը այսպես գնաճն էր զսպում: Սակայն եթե արդարացված էր դեկտեմբերին տեղի ունեցող արժեզրկման եւ գնաճի պարագայում, ապա հիմա` ոչ:

Բանն այն է, որ Հայաստանի իշխանությունները մի տեսակ խուճապային վախ ունեն գնաճի նկատմամբ եւ ավելի շատ մտածում են դրա զսպման, քան տնտեսական աճի մասին: Ինչը թերեւս կարելի է հասկանալ` **տնտեսական աճի դրական արդյունքը ավելի ուշ է ազդում բնակչության լայն խավերի վրա, իսկ բարձր գնաճի բացասական ազդեցությունը այդ նույն բնակչության վրա անմիջապես է տեղի ունենում եւ վերածվում իշխանությունների դեմ ուղղված դժգոհությունների**: Սակայն, տնտեսական աճի դրական արդյունքն ավելի հիմնավոր է եւ կայուն: Հասկանալի է, որ ելքը այս երկու գործոնները հավասարակշռելն է: Այս առումով ներկա պահին գնաճի զսպմամբ շատ ավելի հեռուն ենք գնացել, քան որոշված է հենց իր` ԿԲ կողմից եւ այժմ հարկ է ղեկը փոքր-ինչ դեպի տնտեսական աճին նպաստելուն թեքել` նվազեցնելով վերաֆինանսավորման տոկոսադրույքը եւ ընդլայնողական քաղաքականություն վարելով: **Եթե շարունակենք գերկարեւորել գնաճի զսպումը, ապա սոցիալապես անապահով խավը մեզանում երբեք էլ ապահով չի դառնա**, եթե չասենք, որ այդ խավի մեջ մնացողների թիվն էլ կավելանա:

Ա. Մ.

# Դրամը չի արժեզրկվում եւ չի էլ արժեւորվում` ինչո՞ւ

Հայկական դրամի վարքագիծն այս տարի կարծես թե աչքի է ընկնում կայունությամբ, ինչի վկայությունն է այն, որ տարվա ութ ամիսներին միջին փոխարժեքը գրեթե չի փոխվել, կազմելով միջինը 477 դրամ 1 դոլարի դիմաց, հունվարի` 476,7 դրամ 1 դոլարի դիմաց միջին փոխարժեքի համեմատ:

Հարկ է նշել, որ նման կայուն պահվածք մեր ազգային արժույթը ցույց էր տալիս նաեւ անցյալ տարվա նույն ժամանակահատվածում` մինչեւ նոյեմբերի վերջը: Այդ ընթացքում հայկական դրամի միջին փոխարժեքը կայունացել էր 415 դրամ 1 դոլարի դիմաց միջակայքում: Նոյեմբերի վերջից սկսած եւ հատկապես դեկտեմբերին, արտերկրում պատահած տնտեսական ցնցումները, ի թիվս աշխարհի բոլոր երկրների արժույթների, իրենց ազդեցությունը թողեցին նաեւ հայկական դրամի վրա: Պատճառների մասին այդ ժամանակ բազմիցս ենք անդրադարձել: Այժմ` թե ինչո՞ւ է դրամը կայուն եւ նրա վարքագծի ի՞նչ փոփոխություններ են հնարավոր:

Դեկտեմբերյան տատանումից հետո, արժեզրկվելով ավելի քան 15 տոկոսով, դրամը կայունացավ 470-480 դրամ 1 դոլարի դիմաց միջակայքում: Անցած 8 ամիսներին, ինչպես արդեն նշվեց, որոշակի տատանումներով այս փոխարժեքը կայուն է մնացել: Ընդ որում, այն դեպքում, երբ դեկտեմբերին հաջորդած շրջանում շարունակվեցին արժեզրկվել ռուսական ռուբլին, վրացական լարին, մյուս արժույթները եւ անգամ նավթային եկամուտների հաշվին կայունությունը պահող ադրբեջանական մանաթը: Վերջինս այս օրերին արժեզրկման նոր փուլ է ապրում:

Մեկ անգամ եւս նշելով, որ փոխարժեքը ձեւավորվում է բազմաթիվ` ներքին եւ արտաքին գործոններով, ընդգծենք, որ դրանցից մեկը կարող է տվյալ պահին գերակշռել եւ տատանումներ առաջացնել: Նման տատանում աշխարհում սպասում էին սեպտեմբերին, երբ ԱՄՆ Ֆեդռեզերվը (ԿԲ-ն) պետք է հայտարարեր տոկոսադրույքի հնարավոր բարձրացման մասին, որը կթանկացներ դոլարն ամբողջ աշխարհում: Դա տեղի չունեցավ, քանի որ Ֆեդռեզերվը նպատակահարմար գտավ թողնել տոկոսադրույքն անփոփոխ: Եթե մինչ այդ, դոլարը, կարծես նախապատրաստվելով, կամաց-կամաց արժեւորվում էր, ապա դրանից հետո` սկսեց արժեզրկվել:

Մյուս կողմից` Հայաստանի տնտեսությունում այս տարվա լարված վիճակի արդյունքում շատերն ակնկալում էին, որ դրամը պետք է սկսեր արժեզրկվել: Դա տեղի չի ունենում: **Պատճառն այն է, որ արտաքին ցնցումների բացակայության պայմաններում, փոխարժեքի փոփոխություններ առաջացնող ներքին պատճառները հակակշռում են միմյանց:**

Ինչպես հայտնի է, դեպի Հայաստան մասնավոր փոխանցումներն այս տարի նվազել են: Այսպես` համաձայն ԿԲ տվյալների, 2015-ի հունվար-օգոստոսին բանկային համակարգով ֆիզիկական անձանց կողմից ոչ առեւտրային դրամական փոխանցումները Հայաստան կազմել են 1 մլրդ 22 մլն դոլար` նախորդ տարվա 2014-ի հունվար-օգոստոսի 1 մլրդ 414 մլն դոլարի դիմաց կամ մոտ 392 մլն դոլարով ավելի քիչ: Սա պետք է նպաստեր դրամի արժեզրկմանը: Սակայն արտաքին առեւտրի ցուցանիշներն հակառակ գործընթացի օգտին են:

Նույն` հունվար-օգոստոսին Հայաստանից արտահանումը կազմել է 967 մլն դոլար` փոքր ինչ ավելի անցած տարվա նույն ժամանակահատվածից, իսկ ահա ներմուծումը` 2 մլրդ 74 մլն դոլար, ինչը **էապես` մոտ 800 մլն դոլարով ավելի քիչ է անցյալ տարվա նույն ութ ամիսներից**: Այսինքն, Հայաստանից այդ չափի դոլար քիչ է դուրս եկել, մինչդեռ մասնավոր փոխանցումների նվազումը այդ ցուցանիշից կրկնակի ավելի քիչ է եղել:

Հայաստան եկող զբոսաշրջիկների թիվն աճել է, բայց աճել է նաեւ Հայաստանից հանգստանալու համար արտերկիր մեկնողների թիվը: Հետեւաբար, այս ցուցանիշի ազդեցությունը փոխարժեքի վրա, կարելի է ասել, չեզոք է: Հարկ ենք համարում նշել, որ փոխարժեքի վրա ազդեցության իր գործիքներն է կիրառում նաեւ Հայաստանի Կենտրոնական բանկը, որի նպատակը գնաճի կարգավորումն է եւ որը ազդում է նաեւ փոխարժեքի վրա:

Մեծ հավանականությամբ, կարելի է ասել, որ միջազգային արժութային շուկայի ներկայիս իրավիճակում, եթե չլիներ մասնավոր դրամական փոխանցումների նվազումը, ապա դրամը ոչ միայն կայուն կմնար, այլեւ որոշակիորեն կարժեւորվեր: Նմանատիպ գործընթաց տեղի ունեցավ 2004-2008 թվականներին, երբ դրամը սկսեց արժեւորվել արտահանման ավելացման, մասնավոր փոխանցումների ներհոսքի, զբոսաշրջության ավելացման եւ ընդհանրապես` տնտեսական բարձր աճի ազդեցությամբ, հասնելով մինչեւ 300 դրամ 1 դոլարի դիմաց փոխարժեքին: Առաջիկայում սպասել նման արժեւորման երեւի թե չարժե, քանի որ, չնայած ներմուծման ծավալների լուրջ նվազմանը, մասնավոր փոխանցումները նույնպես նվազում են: Այլ բան է, իհարկե, եթե ԱՄՆ իշխանություններն իրենց դրամավարկային քաղաքականության մեջ որոշեն փոփոխություն կատարել կամ միջազգային ֆինանսական շուկայում ինչ-որ ցնցում լինի:

ԱՐԱ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

AZG NEW SHABAT 1.QXD 15/10/2015 22:25 Page 4



# Արա Աբրահամյանն ուզում է Հայաստանում իրականացնել իր ծրագրերը

⇨1 Թե որն է նման մտադրության շարժառիթը՝ ըստ Աբրահամյանի ինքն ամեն ինչ ունի, հաջողակ է Ռուսաստանում, սակայն չի կարող հանգիստ քնել, երբ գիտի, որ Հայաստանում վիճակը լավ չէ, երբ գիտե այստեղի բազմաթիվ խնդիրները:Նրան Հայաստանում կարիերա պետք չէ, այլ՝ օգնել երկրին ոտքի կանգնելու, բարելավելու վիճակը:

Լրագրողների ուղիղ հարցերին, թե լուրեր կան, որ ուզում եք քաղաքական կուսակցություն ստեղծել եւ Արթուր Բաղդասարյանի գլխավորած «Հայկական վերածննդի» հետ համատեղ մասնակցել խորհրդարանական ընտրություններին, Արա Աբրահամյանը Ա. Բաղդասարյանի մասով նշեց, թե նա լավ քաղաքական գործիչ է, բայց ինքն իր ճամփով է գնալու: Թե քաղաքականությանը մասնակցելու երկու ճանապարհից՝ կա՛մ կուսակցություն ստեղծել, կա՛մ այլ կուսակցության հետ համատեղ գնալ ընտրությունների, վերջնականապես ո՞րը կընտրի ինքը, դեռ ժամանակ ունի որոշելու, իր մասնագետներն ու իրավաբանները տնտղում են հնարավորությունները, եւ դրա վերջնական պատասխանը կլինի 2016 թվականի մարտին: Սակայն կոնկրետացրեց, թե մտադրություն ունի Հայաստանում տնտեսական ծրագիր ներկայացնել եւ իրագործել, այդ թվում՝ խորհրդարանական ընտրություններին մասնակցության միջոցով.«Եթե տեսնեմ, որ կա համապատասխան թիմ, համապատասխան քաղաքական ուժ, համապատասխան երկրների ղեկավարների կամ մեծ բիզնեսի աջակցություն եւ միմյանց հետ համագործակցելու մեխանիզմ՝ եկող մարտ ամսին ես վերջնական որոշում կկայացնեմ՝ գնա՞մ ընտրությունների, թե՞ ոչ», անկեղծացավ նա: Նաեւ նկատեց, թե կուսակցություն հիմնելուց առաջ գաղափարախոսությունն ու ծրագրերն են կարեւոր, որոնց վրա իր կողմնակիցներով աշխատում են: Ի դեպ՝ Հայաստանի վիճակը բարելավելու իր ծրագրերի մասին նա նաեւ խոսել է Հայաստանի նախագահի հետ:

Այս կարգի հայտարարությանն, անշուշտ, կարող են հետեւել արձագանքներ, որոնք եւս Ա. Աբրահամյանի համար հնարավորություն են մոնիտորինգ անելու եւ միգուցե նաեւ հետեւությունների հանգելու որոշում կայացնելուց առաջ: Բոլոր պարագաներում, հետեւելով ԶԼՄ-ների բուռն արձագանքին՝ մեծ քաղաքականություն մտնելու Ա. Աբրահամյանի դեռեւս չորոշակիացված ցանկությանը, կարելի է ասել, որ Ա. Աբրահամյանի հայտարարությունը առաջիկայում քաղաքական ինտրիգ պարունակող ծավալուն գործընթացի սկիզբ կարող է դառնալ, եթե, իհարկե, Ա. Աբրահամյանը չորոշի իր այդ մտադրությունից հետ կանգնել:

Լրագրողներին հետաքրքրող մյուս հարցը վերաբերում էր պատգամավոր դառնալու,ինչպես նաեւ երկրում առանցքային պաշտոններ վարելու համար՝ մշտական բնակության իմպերատիվ պահանջներին (վարչապետի պարագայում՝ 4 տարի սահմանադրական փոփոխություններով, պատգամավորի դեպքում՝ 5 տարի), որին ի պատասխան Ա. Աբրահամյանը նշեց, թե ինքը իրավական տիրույթից դուրս չի գործելու, գիտե, որ Հայաստանի օրենսդրությամբ ինքը չի կարող վարչապետ կամ նախագահ լինել, իսկ խորհրդարանական ընտրություններին իր ստեղծելիք կամ հիմնելիք կուսակցության մասնակցության բոլոր մեխանիզմները հիմա իրավաբանների հետ հստակեցնում են, մինչեւ որոշում կայացնելը բոլոր նրբությունները հաշվի կառնվեն:

Հարց հնչեց այն մասին, թե արդյո՞ք հաշվի է առնվում փորձը՝ ի՞նչ է պատահում այն քաղաքական գործիչների հետ, որոնք մեծ հավակնություններ են դրսեւորում, բերվեց Գագիկ Ծառուկյանի օրինակը, Աբրահամյանը նշեց, որ ինքն իր ճանապարհով է գնալու, չնայած դաշտի ողջ փորձը հաշվի է առնվելու:

Ռուսաստանի նախագահի «դաբրոյի» կարիքը Հայաստանում նա չունի, դրա կարիքը ռուսական գործունեության դաշտում կա, իսկ Հայաստանի նախագահի վերաբերմունքի առումով էլ խնդիր չկա, քանի որ Հայաստանի նախագահին ինքը տեղեկացրել է, որ ծրագրեր ունի, վերջինս էլ ասել է. «Եթե ծրագրեր ունեք՝ ինչու չէ, մասնակցեք»: Ի դեպ՝ «**Ազգի**» հարցին ի պատասխան, թե Հայաստանում ազատ է քաղաքական դաշտի ընդդիմադիր հատվածը, եւ ընտրողներից մեծ քվե ստանալու համար պետք է ընդդիմախոսել իշխանություններին, պատրա՞ստ է Ա. Աբրահամյանը դրան, Ա. Աբրահամյանը պատասխանեց, թե հանուն իր ծրագրերի ինքն ամեն ինչի էլ պատրաստ է, մինչդեռ «Առավոտի» հարցին պատասխանելիս նա ասում էր, որ իրենք չեն գալիս ուրիշներին քննադատելու, ու որ՝ Հայաստանի երեք նախագահների արածն էլ պետք է ըստ արժանվույն գնահատել: Իսկ ասուլիսի ժամանակ էլ ասել էր, թե ոչ մեկին չեն քննադատելու, ասելու են միայն այն, ինչ անելու են:

Չնայած լրագրողներին Ա. Աբրահամյանը խորհուրդ էր տալիս համբերել մինչեւ մարտ, քանի որ կուսակցություն հիմնել-չհիմնելու վերաբերյալ վերջնական որոշումն այդ ժամանակ է լինելու, սակայն հիմնելիք կուսակցության ֆինանսական միջոցների մասին խոսելիս նկատեց, թե մոտ ապագայում Երեւանում կուսակցական գրասենյակ է բացելու: Իսկ կուսակցության ֆինանսական միջոցները գոյանալու են իր անձնական միջոցներից:

«**Ազգի**» այն հարցին ի պատասխան, թե ամենեւին անկարեւոր չէ՝ ո՞ր մոդելով ես մասնակցում ընտրությունների, գործող սահմանադրությա՞մբ, թե՞ փոփոխվածով, այսինքն կո՞ղմ է փոփոխություններին, թե՞ ոչ, Ա. Աբրահամյանը պատասխանեց, թե ինքը միշտ եղած օրենքներով է աշխատել, սահմանադրական դաշտում, ու պետք է սպասել -տեսնել, թե ի՞նչ կասի ժողովուրդը հանրաքվեին. «Եթե իմանանք, որ կատարվում է մի փոփոխություն, որ նպաստելու է երկրի զարգացմանը... Ես այդպես չեմ տեսնում», մի փոքր անորոշ ասաց նա:

«Իշխանափոխություն չեմ ուզում, ուզում եմ ընտրություններին մասնակցել», առավել հասկանալի ձեւակերպեց նա ասուլիսում: Հարցին, թե Հայաստանում ընտրությունները միշտ կեղծվում են, ինչպե՞ս է իր կուսակցության համար ճանապարհ հարթելու այդ պայմաններում, նա պատասխանեց, թե այդ մասին լսել են եւ հետաքրքրվում են այն հարցով, թե ինչ մեխանիզմներով կարելի է բացառել խախտումներն ընտրություններում, այդ հարցի շուրջ նաեւ Հայաստանի նախագահին են դիմելու:

Աբրահանյանը հիշեց, որ ժամանակին Երեւանի գյուղատնտեսական ինստիտուտում սովորելու գործուղում նրան տվել են հայրենի գյուղում՝ Մալիշկայում.«Հիմա էլի մեր գյուղացիների հետ պետք է խորհրդակցեմ՝ գործուղում կտա՞ն մեծ քաղաքականություն գնալու, թե ոչ»՝ պատկերավորեց նա այն միտքը, թե Հայաստանում իրեն պետք է ոչ թե ուրիշի, այլ ժողովրդի «դաբրոն»:

Ի՞նչ կարելի է եզրակացնել այս բոլորից՝ Ա. Աբրահամյանը հակված է կուսակցություն ստեղծել, նա ընդդիմադիր չէ, անձամբ ինքը չի կարող ցուցակ գլխավորել՝ կապված Հայաստանի սահմանադրական այն նորմի հետ, որը պատգամավոր դառնալու համար հինգ տարվա մշտական բնակության իմպերատիվ նորմ է պարունակում, բացի այդ՝ Ա. Աբրահամյանն ընկալվում է որպես ռուսական ազդեցության գործիչ՝ նա Ռուսաստանի նախագահին առընթեր ազգային քաղաքականության տեղեկատվական հարցերով հանձնաժողովի ղեկավարն է, այլ երկրի պաշտոնյա (թեկուզ որ դա հասարակական պաշտոն է): Ա. Աբրահամյանն ունի կուսակցություն հիմնելու համար բավարար միջոցներ, որոնք ուրիշ շատ կուսակցությունների պարագայում առկա չեն: Եզրակացության այս բոլոր բաղադրիչները Հայաստանում կարող են հակազդեցության հանդիպել, որը հաղթահարելու խնդիր կունենա Ա. Աբրահամյանը, եթե կուսակցություն ստեղծի եւ միջնորդավորված մասնակցի Հայաստանի քաղաքական կյանքին, ու, հավանաբար, ինքը այս ամենը մյուսներից ավելի լավ է հասկանում:

# Եթե Փերինչեքին իրավացի են ճանաչում, ուրեմն...

⇨1 **Իսկ news.am-ի փոխանցմամբ, ՀՅԴ Եվրոպայի Հայ դատի հանձնախումբը ողջունել է ՄԻԵԴ վճիռը:Գրասենյակի պատասխանատու Պետո Դեմիրճյանը նշել է՝ «ողջունելի է հատկապես այն կետը, որով Մեծ պալատը փոխեց դատարանի ստորին պալատի որոշումը, որ Ցեղասպանության հարցն այս դատարանում քննարկման հարց չէ: Կարեւոր է նաեւ դատարանի արձանագրումն առ այն, որ հայերս արժանապատվության եւ հարգանքի պաշտպանության իրավունք ունենք»: Նույն լրատվական աղբյուրը ՀՀ գլխավոր դատախազի հետ զրույցում հարց է ուղղում՝ «Հայկական կողմի տեսանկյունից ինչպե՞ս կգնահատեք այս որոշումը, կարելի՞ է սա հաղթանակ համարել»: Պատասխանը կարծես հաստատում է բառը՝ հաղթանակ: Իրավաբան չեմ, սակայն բանասիրական կրթությունս ինձ հուշում է, որ դատավարությունը մի կողմին ուրախացնելու, մյուս կողմին հիասթափության տրամադրություն էր փոխանցելու: Նույն ձեւով, ի դեպ, մտածում են նաեւ շվեյցարացի լրագրողները: Թուրքերն առավոտից հրճվում են, ի դեպ նրանք էլ, ադրբեջանցիներն էլ հայկական լրատվամիջոցներից արագ աշխատեցին, իսկ վերջիններս շամպայնի հրավեր են անում, որ հենց 100- ամյա տարելիցին Ստրասբուրգը արդար վճիռ հրապարակեց: Հիմա ի՞նչ՝ ուրախանա՞նք, որ Հայոց ցեղասպանության գլխավոր ուրացող շոումենին նոր հարթակ է տրամադրվելու ազատ շարադրելու մտքին եկածը:**

**Գերմանական հեղինակավոր երկու թերթերն էլ նույն շեշտադրումն են անում՝ «Ֆրանկֆուրտեր ալգեմայնե ցայթունգը» իր հոդվածը վերնագրել է «Դատարանը թույլատրեց ցեղասպանության ուրացումը», իսկ «Ցայթը»՝ «Հայոց ցեղասպանության ուրացումը կարծիքի ազատություն է համարվում»: «ՖԱՑ»-ի հոդվածագիր Յուրգ Ալթվեգգը Ժնեւից գրում է՝ թուրքերն այնպես ուժգին են տոնում, ասես ֆուտբոլի եվրոպական առաջնության ընտրական փուլից հետո է, հայերը՝ ցնցված են, իսկ Շվեյցարիայում տոնական տրամադրություն ունի Շվեյցարիայի ժողովրդական կուսակցությունը: Ըստ նույն հեղինակի, ստրասբուրգյան վճռից կօգտվեն նաեւ հակասեմականները:**

**Շվեյցարական «Aargauer Zeitung»- ը «Ստրասբուրգի նկատողությունը Շվեյցարիային՝ Հայոց ցեղասպանությունը կարելի է ուրանալ» վերնագրի տակ արդեն կարծիք է հավաքում. «Ստրասբուրգի վճռի համաձայն, Շվեյցարիայում կարելի է ուրանալ Հայոց ցեղասպանությունը: Ձեր կարծիքով սա ճի՞շտ է, թե՞ սխալ»: Մի օրում դժվար շվեյցարացին մտափոխվի եւ կասկածի, որ երկրի դատարանը եվրոպական կոնվենցիային հակասող վճիռներ է իրականացրել՝ ազատազրկելով ու տուգանելով Փերինչեքին, ու հիմա ժամանակն է երկրի արդարադատության մարմիններին ստիպել Ֆեմիդայի կշեռքի նժարները լավ ծանրութեթեւ անել:**

**ՄԻԵԴ վճռի հետեւանքը դեռ տեսանելի չէ: Շվեյցարիան 6 ամսվա ընթացքում Եխ նախարարների կոմիտեին պիտի զեկուցի, թե ինչպես է պատկերացնում դրա իրականացումը: 10 տարի է, ինչ Շվեյցարիայում շրջանառվում է «Փերինչեքի դատավարություն» արտահայտությունը, Հայոց ցեղասպանությունն ուրացողի նրա կերպարը անպատիժ չմնաց, քանի որ տեղի «Շվեյցարիա-Հայաստան» ընկերակցությունը 10 տարի անհոգնել, պրոֆեսիոնալ հետապնդեց հարցը, Շվեյցարիայի հանրության համար ընկալելի դարձրեց հայության պահանջը: Ի դեպ երեկ, վճռի հրապարակումից հետո «Շվեյցարիա-Հայաստան»-ը նախ տարածեց իր հաղորդագրությունը (տես՝ ստորեւ), որում խոր հիասթափության մասին էր ակնարկում, իսկ ժամը 15. 30-16. 30 Բեռնում մամուլի ասուլիս հրավիրեց, որին ընկերակցության նախագահներ Սարգիս Շահինյանի եւ Անդրեաս Դրայզիհբների հետ մասնակցում էին նաեւ պատգամավորներ Ուելի Լոյենբերգերը, Դոմինիկ դե Բումանը: Այժմ ոչ միայն Շվեյցարիայում, այլ նաեւ հարեւան եվրոպական երկրներում, մանավանդ այն երկրներում, որտեղ մեծ թվով հայեր եւ թուրքեր են ապրում, դժվար է լինելու պատկերացնել, թե այս վճռից հետո Փերինչեքն իր մեծաթիվ բանակը հավաքած Թալեաթին ազգային հերոս է հռչակելու, մինչ հայերս եւ Հայոց ցեղասպանության փաստականությունը հարցականի տակ չդնող եվրոպացի հանրությունը հանդուրժելու ենք նրա ազատ խոսքի՝ եվրոպական դատարանի վճռով առավել սանձարձակ դարձած իրավունքը: Կամ կարդացած լինելով մեր հայ գործընկերների վերոբերյալ հաղթանակ բառը շեշտադրող պարբերությունները, հանգիստ ունկնդրելու ենք դրանք՝ մտածելով, թե միեւնույն է՝ կա ՄԻԵԴ վճիռը, որ մեր ձեռքին, իբր, հաղթաթուղթ է: Մեզ համար պարզ չէ, թե Հունաստանն ու Սլովակիան, որ քրեականացրել են Հայոց ցեղասպանության ուրացումը, ի՞նչ են անելու այս վճռից հետո, վերանայելո՞ւ են իրենց օրենսդրությունը: «Ազերթաջի» Ստրասբուրգի սեփական թղթակից Վուգար Սեուդովն իր երեկվա հրապարակման մեջ բարեկամներին առաջարկում է Ֆեմիդայի այս հաղթանակի առթիվ շամպայն խմել, իսկ մեզ՝ թթի օղի... Ուզում ենք հարցնել՝ ո՞ր շամպայնից՝ Ղրիմյա՞ն, որ այլեւս Ուկրաինայինը չէ:**

**Վճռին դեռ անդրադառնալու ենք:**

Գերմանիա

## Փերինչեքը արդարացվեց...

**Բեռնի «Շվեյցարիա-Հայաստան ընկերակցությունից» ստացված հաղորդագրությունը տեղեկացնում է, որ մարդու իրավունքների եվրոպական դատարանի վերին պալատը վերահաստատել է դատարանի նախկին (դեկտեմբեր 17, 2013 թ.) որոշումը «Փերինչեքն ընդդեմ Շվեյցարիայի» գործում եւ փաստորեն արդարացրել Փերինչեքին:**

**«Շվեյցարիա-Հայաստան ընկերակցությունը» խորապես ցնցված է այս դատավճռով, որն արձակվում է Հայոց ցեղասպանության հարյուրամյակի հիշատակություններ տարում: Ներկա դատավճիռը մարտահրավեր է նետում Շվեյցարիայի դատարանի որոշմանը, որը դատապարտել էր Փերինչեքին Ցեղասպանության փաստը ժխտելու համար, եւ հարված հասցնում Վատիկանում Հռոմի պապի հնչեցրած ցեղասպանության ճանաչման համընդհանուր հոգեւոր մթնոլորտին: Հայոց ցեղասպանությունը պատմական փաստ է եւ չի կարող հարցականի տակ դրվել»,** ասված է հաղորդագրության մեջ, որը նաեւ նշում է, որ Թուրքիան էր, որ սկզբից որոշեց Փերինչեքին օգտագործել փորձարկելու իր ժխտողական քաղաքականությունը այլ երկրներում:

AZG NEW SHABAT 1.QXD 15/10/2015 22:25 Page 5



# Երբ ես դառնամ Նոբելյան խաղաղության մրցանակի դափնեկիր...

**ՀՈՎԻԿ ԱՖՅԱՆ**

Անցած ուրբաթ օրը, երբ մեր թերթի նախորդ համարն արդեն լույս էր տեսել, հայտնի դարձավ, որ Նոբելյան հանձնաժողովի որոշմամբ այս տարվա Նոբելյան խաղաղության մրցանակը ստացել է Թունիսի «Ազգային երկխոսության քառյակը», որը քաղաքացիական հասարակության կազմակերպությունների դաշինք է: Հենց Նոբելյան հանձնաժողովից էլ (այլ կերպ ասած՝ այս դաշինքի՝ Նոբելյան մրցանակ ստանալուց հետո միայն) տեղեկանում ենք, որ «քառյակը ձեւավորվել է այլընտրանքային քաղաքական կարգավորման գործընթաց 2013-ին, երբ երկիրը գտնվում էր քաղաքացիական պատերազմի շեմին եւ երաշխավորել է ամբողջ բնակչության հիմնարար իրավունքները»: Ես, օրինակ, շատ բան չհասկացա այս պարզաբանում-բացատրություն-տեղեկագրությունից, բայց դա կարեւոր չէ: Կարեւորն այն է, որ թունիսյան քառյակը (ոչ մի պարագայում չխառնել՝ իրենցից անհամեմատ ավելի հայտնի լիվերպուլյան քառյակի հետ), Խաղաղության Նոբելյան դափնեկիր դառնալու «մրցույթում» հաղթել է Գերմանիայի կանցլեր Անգելա Մերկելին, Հռոմի պապ՝ Ֆրանցիսկոսին, ԱՄՆ պետքարտուղար Ջոն Քերիին եւ Իրանի արտաքին գործերի նախարար Ջավադ Զարիֆին:

Այս համատեքստում կարելի է անգամ թունիսյան քառյակին առաջարկել մասնակցել Գերմանիայի հաջորդ խորհրդարանական ընտրություններին (հատկապես, որ Գերմանիայում միգրանտներին լավ տեղ են տալիս), քանի որ, եթե թունիսցիները հաղթել են Անգելա Մերկելին՝ Նոբելյան մրցավազքում, ապա ոչ մի խնդիր չեն կարող ունենալ Բունդեսթագի ընտրություններում եւ իհարկե կհաղթեն Մերկելի կուսակցությանը:

Ես, ճիշտն ասած, չհասկացա, թե ինչո՞ւ էին թեկնածուների թվում ԱՄՆ-ի եւ Իրանի արտաքին քաղաքական գերատեսչությունների ղեկավարները: Կարելի է տրամաբանել, որ հաշվի էր առնվել նրանց անմիջական ներդրումը Իրանի միջուկային ծրագրում ձեռք բերված պատմական համաձայնագրի կայացման գործում, սակայն այդ պարագայում կարելի էր ոչ թե Ջոն Քերիին եւ Ջավադ Զարիֆին առանձին-առանձին առաջադրել, այլ Քերի-Զարիֆի զույգին: Հռոմի պապ պարագան հասկանալի է. նրա անունը Նոբելյան խաղաղության մրցանակի թեկնածուների ցանկում միշտ է հասկանալի: Բայց միայն թեկնածուների ցանկում, ոչ թե՝ դափնեկիրների, քանի որ, երբ Հռոմի պապը Նոբելյան խաղաղության մրցանակի դափնեկիր դառնա, այդ օրը մեծ քաղաքականությունը կհավասա Աստծու գոյությանը, իսկ այդպես չի կարող լինել:

Ուրեմն այս տարվա Նոբելյան մրցանակակիրները, կոնկրետ՝ Խաղաղության մասով, հայտնի են, անցնենք՝ հաջորդ տարվան: Ամենեւին չեմ առաջարկում իմ թեկնածությունը, չնայած այս տարվա Նոբելյան Գրականության մրցանակը ստացել է լրագրող Սվետլանա Ալեքսիեւիչը: Իսկ չեմ առաջարկում՝ երկու պատճառով. նախ, որովհետեւ ես տիկին Ալեքսիեւիչի պես շատ եւ շատ-շատ լավ չեմ գրում, բացի այդ ես իրատես եմ, այսինքն գիտեմ, որ Նոբելյան մրցանակակիրների պարգեւատրության ժամանակ ներկայանալ չեմ կարող, քանի որ այդ միջոցառման տղամարդ ներկաների համար պարտադիր՝ սեւ ֆրակ չունեմ: Չնայած ամբողջ աշխարհում խաղաղության հասնելու ցանկություն-ձգտումս ուղիղ համեմատական է սեւ ֆրակ ունենալու ցանկությանս հետ:

Այնուամենայնիվ, եթե համաշխարհային խաղաղության հաստատմանը չհավատալու պատճառով ինձ հաջորդ տարի առաջադրեն Նոբելյան Խաղաղության մրցանակի, ես անշուշտ միջոց կգտնեմ մասնակցելու պարգեւատրման արարողությանը, որի ընթացքում էլ կասեմ հետեւյալը. «Չնայած ես ավելի ուրախ կլինեի այստեղ տեսնել նաեւ մեծարգո Ալֆրեդ Նոբելին, բայց շատ ուրախ եմ՝ Ձեզ տեսնելու համար, միեւնույն ժամանակ՝ տխուր: Գիտե՞ք ինչու, որովհետեւ դուք բոլորդ նույն հագուստն եք հագել, նույն սեւ ֆրակները, կանա՞յք, դե կանայք միշտ են ինքնատիպ եւ այսքան դարերի ընթացքում մեզ հուշում են աշխարհում խաղաղության վերջնական հաստատման բանալին: Չենք հասկանում, չենք հասկանում, որ աշխարհում խաղաղություն կլինի այն ժամանակ, երբ բոլորը միեւնույն ֆրակով չլինեն, իսկ ֆրակ հագնել չցանկացողները ֆրակ հագնելու պարտադրանքի առջեւ չկանգնեցվեն, երբ խրախուսվի տարբերությունը: Հենց այդ պատճառով էլ ես այստեղ ներկայացել եմ՝ ջինսով: Շնորհակալություն եւ խաղաղություն ընդ ձեզ»:

Բայց ես, իհարկե, Նոբելյան խաղաղության մրցանակ չեմ ստանա ոչ հաջորդ տարի, ոչ էլ 84 տարի անց. նախ հազիվ թե կարողանամ «նշանակալից ավանդ ունենալ» մի գործում, որին չեմ հավատում, ապա եւ ֆրակ չունեմ:

# «Պետրոսյաններն» ընդդեմ «Պողոսյանների»

**Սահմանադրական բարեփոխումների հետ կապված երկու լավ բան արդեն իսկ տեղի է ունեցել: Նախ՝ մեր որոշ պատգամավորներ սկսել են կարդալ: Ճիշտ է, որպես իրենց առաջին գիրք, շատ բարդ բան են վերցրել՝ սահմանադրության փոփոխությունների նախագիծը, ինչն անչափ բարդ է հասկանալ-ըմբռնել, եթե դու չես կարդացել, ենթադրենք Դյումայի՝ «Կոմս Մոնթե Քրիստո»-ն, բայց սա խոսակցության այլ թեմա է: Երկրորդ լավ բանը մեր որոշ պատգամավորների համակարգչային գիտելիքների առաջացումն է. մասնավորաբար նրանք սկսել են սահմանադրության փոփոխությունների նախագիծն իրար իմեյլով ուղարկել, ինչն անելու համար համակարգչային տարրական գիտելիքներ են պետք: Իհարկե այս վերջինը հատկապես մեր պատգամավորներից ոմանք անձամբ չեն անում (բա էլ ինչո՞ւ են օգնականներ պահում), անշուշտ մեր որոշ պատգամավորներ անգամ սահմանադրության նախագիծն անձամբ չեն կարդում-կարդացել (բա էլ ինչո՞ւ են օգնական պահում), այլ իրենց պատմել են, բայց մի պահ պատկերացնենք, որ մեր այդ որոշ պատգամավորներն անձամբ են կարդացել տեքստը եւ այն անձամբ են ուղարկում իրար: Սա պատկերացնելն անչափ կարեւոր է, քանի որ, հակառակ պարագայում այս պահին որեւէ լավ բան չենք կարող ասել սահմանադրական փոփոխությունների մասին:**

**Օրինակ, որպեսզի Հայաստանի քաղաքացին կարդա առաջարկվող նախագիծը, իսկ այստեղ շատ կարեւոր է իմանալ, թե նախագիծն առաջարկվում է ոչ թե քաղաքական գործիչներին, այլ հենց Հայաստանի քաղաքացուն, նա պետք է նախ մտնի Google որոնման համակարգ, այնտեղ գրի՝ «սահմանադրական փոփոխություններ», ապա բացված պատուհաններից ընտրի կա՛մ ՀՀ արդարադատության, կա՛մ ԱԺ-ի պաշտոնական կայքերը, մտնի այնտեղ, այնտեղ էլ՝ այդ կայքերի որոնման համակարգով նորից փնտրի «սահմանադրական փոփոխություններ», նոր միայն կբացվի փաստաթուղթը եւ ՀՀ քաղաքացին հնարավորություն կստանա ծանոթանալու դրան՝ ինքնուրույնաբար: Մինչդեռ, դարն այնպիսին է, որ կարելի էր բացել (թեկուզ ժամանակավոր) սահմանադրություն անունով կայք, այնտեղ ներբեռնել նախագիծը, հասցեն դարձնել հանրամատչելի, եւ քաղաքացիներն այլեւս դժվարություն չէին ունենա նախագիծը փնտրելու գործում:**



**Հիմա, Հայաստանի քաղաքացին ունի ոչ միայն այդ դժվարությունը: Բանն այն է, որ դեկտեմբերի 6-ին Հայաստանի քաղաքացիները գնալու են հանրաքվեի եւ «այո» կամ «ոչ» են ասելու մի փաստաթղթի, որին խորապես տեղյակ չեն: Այսինքն, այս պահին երկրում կա երկու քաղաքական հոսանք՝ նրանք, ովքեր կողմ են փոփոխություններին եւ նրանք, ովքեր դեմ են փոփոխություններին: Առաջինները քաղաքացիներին բացատրում են, թե ինչու է պետք կողմ լինել, երկրորդները, հասկանալի է, անում են հակառակը: Արդյունքում քաղաքացին, անշուշտ, իմանում է, որ ենթադրենք Պողոսյան Պողոսը կողմ է սահմանադրությանը, իսկ այ Պետրոսյան Պետրոսը՝ դեմ, բայց չի իմանում, թե այդ ի՞նչ է գրված այդ նախագծում: Այսինքն քաղաքացին հանրաքվեում իր ընտրությունը կատարելու է ոչ թե ելնելով առաջարկվող տեքստին իր վերաբերմունքից եւ գնահատականից, այլ Պետրոսի եւ Պողոսի հանդեպ ունեցած իր վերաբերմունքից: Եթե հարգում է Պետրոսին, ապա՝ «ոչ» է ասելու, եթե Պողոսին՝ ապա «այո» է ասելու:**

**Մինչդեռ կարելի էր սահմանադրական փոփոխությունների քարոզարշավից առաջ, հաշվի առնելով նախագծի համընդհանուր նշանակությունն ու կարեւորությունը, ոչ թե քաղաքացիներին ներկայացնել սեփական տեսակետները նախագծի շուրջ, այլ բո՛ւն նախագիծը, թողնելով, որ քաղաքացին ինքը որոշի:**

**Շուտով կմեկնարկի սահմանադրական փոփոխությունների պաշտոնական քարոզարշավը, այսինքն «Պետրոսյաններն» ու «Պողոսյանները» արդեն կանցնեն ժողովրդի հետ անմիջական շփման: Մինչ այդ դրա կարիքը չկար, որովհետեւ ժողովրդի հետ անմիջականորեն աշխատելու կարիք չի լինում, ի տարբերություն ժողովրդին ասելու, որ ճիշտ մենք ենք, իսկ ով մեզ հետ չէ... Դե դուք հասկացաք, ի տարբերություն սահմանադրական առաջարկվող նախագծի: Արդյունքում էլ քաղաքացին ականատեսն է լինելու ոչ այնքան սահմանադրական հանրաքվեին, որքան նրան, թե ինչպես են «Պետրոսյանները» հաղթում «Պողոսյաններին» կամ՝ հակառակը: Ինչպես միշտ:**

**Իսկ մինչ քարոզարշավի թեժացումը երեք հարց.**

**Սահմանադրական փոփոխություններին դեմ արտահայտվողներին. եթե Սահմանադրությունը եւ հետեւաբար դրա փոփոխությունը չի կարող ազդեցություն ունենալ երկրի վիճակի բարելավման եւ ժողովրդի կենսամակարդակի բարձրացման վրա (որոնք այս պահին կարեւորագույն հարցերն են, ի տարբերություն սահմանադրական փոփոխությունների), ապա էլ ի՞նչ կարիք կա դեմ լինել նման «անկարեւոր հարցի»:**

**ՀՀ քաղաքացուն. Դուք տեղյա՞կ եք սահմանադրական փոփոխությունների նախագծի տեքստին: Ոչ թե նրանից, թե ովքեր են կողմ (ինչու են կողմ), ովքեր են դեմ (ինչու են դեմ), այլ հենց տեքստից տեղյա՞կ եք, գիտե՞ք թե մեջը ի՞նչ է գրված:**

ՀՈՎԻԿ ԱՖՅԱՆ

# Առանց պապերի եւ երեխաների

**Ինչպես գիտենք, անկախանալով մենք իրագործել ենք մեր պապերի երազանքը, ընդ որում՝ ոչ թե սովորական, այլ՝ դարավոր: Գիտենք նաեւ, որ մեր հայրենիքը, ներառյալ՝ երկիրը, մենք ժառանգել ենք մեր պապերից: Չնայած այս կապակցությամբ երկրորդ վարկածն էլ կա, ըստ որի մենք մեր հայրենիք-երկիրը ոչ թե ժառանգել ենք մեր պապերից, այլ պարտքով ենք վերցրել մեր երեխաներից, հետեւաբար հենց նրանց էլ մի օր պետք է հետ վերադարձնենք: Թերեւս հենց այս երկու գիտակցումների արդյունքում էլ մենք՝ այսօր ապրողներս, ապրում ենք ծնողներին հուսախաբ չանելու ջանասիրությամբ եւ հանուն մեր երեխաների՝ լուսավոր, կամ բարգավաճ, եւ կամ ապահով, կամ էլ հզոր ապագայի:**

**Իզուր: Բանն այն է, որ ոչ առաջ, երբ ապրել եւ երազել են մեր պապերը, ոչ էլ հետո, երբ պիտի հայրենիք-երկիրը մեր երեխաները տոկոսներով հետ ստանան մեզանից, մենք, կամ գոնե մեզանից շատերը չենք եղել եւ չենք լինելու, հետեւաբար ստացվում է, որ ոչ լավ ու ազատ հայրենիք ունենալու երազանքն է մերը, ոչ էլ այդ հայրենիքից վայելք ստանալու բերկրանքն է լինելու: Մենք ընդամենը կապող օղակ ենք՝ մեր պապերի եւ երեխաների միջեւ եւ զրկված ենք այստեղ եւ հիմա լավ ապրելու որեւէ հեռանկարից: Միջանկյալ սերունդ...**

**Տարիներ առաջ, երբ Թբիլիսիում հարավկովկասյան երկրների լրագրողների սեմինարի էի, Վրաստանի նախկին վարչապետ Բիձինա Իվանիշվիլին նոր-նոր էր սկսել իր կարճատեւ քաղաքական կարիերան եւ «Վրացական երազանք» կուսակցությունը հենց այդ օրերին էր հայտարարել երկրի խորհրդարանական ընտրություններին մասնակցելու իր մտադրության մասին: Վրացի գործընկերներս խիստ ոգեւորված էին, մեծ հույսեր կապելով Իվանիշվիլիի հետ: Ես հետաքրքրվեցի նրանցից, թե՝ լավ, մի՞թե Սաակաշվիլիի օրոք լավ չէր, մարդը երկիրը եւ ամենակարեւորը՝ ժողովրդին փոխեց: Երբեք չեմ մոռանա, թե ինչ պատասխանեցին վրացի լրագրողները. «Այո, դա այդպես է, այո, Սաակաշվիլին փոխեց մեզ եւ մեր երկիրը եւ դեպի լավը, մենք հիմա լավ ենք ապրում, բայց մենք ուզում ենք հիմա եւ այստեղ ավելի լավ ապրել»:**

**Կարող էին, չէ՞, վրացիները չընտրել Իվանիշվիլիին, բավարարվել Սաակաշվիլիով, իսկ «ավելի լավ ապրելու» իրենց ցանկությունը թողնել իրենց երեխաներին, պահելով իրենց՝ քչով բավարարվելը: Իհարկե կարող էին, բայց չարեցին: Այլ հարց է, որ Իվանիշվիլին եկավ-գնաց, բայց վրացիների կյանքը էապես չբարելավվեց՝ Սաակաշվիլիի ղեկավարման տարիների հետ համեմատ, բայց կարեւորն այն է, որ վրացիները, այսօ՛ր ապրող վրացիները, համոզված էին, որ հիմա եւ այստեղ ավելի լավ է լինելու, եւ փորձեցին: Մենք, սակայն, հեռու ենք պահում մեր հայրենիք-երկիրը նման փորձարկումներից, որովհետեւ այն մերը չէ. այն մենք ժառանգել ենք մեր պապերից եւ կամ պարտքով վերցրել մեր երեխաներից: Դրա համար էլ բոլորն ովքեր խոսում են, խոսում են կա՛մ հինավուրց պատմությունից, կա՛մ լուսավոր ապագայից: Եղբայր, մենք հիմա ենք ապրում, հիմա ենք վատ ապրում, հիմա ենք ուզում ավելի լավ ապրել, հիմա եւ այստե՛ղ:**

**Սա մեր երկիրն է, իհարկե սա չի նշանակում, որ «որտեղ ուզենք կնստենք», բայց սա նշանակում է, որ այն հիմա պետք է փոխվի դեպի լավը, եւ այդ փոփոխությունը պետք է մենք անենք՝ ոչ թե հանուն մեր պապերի երազանքի ամբողջական իրագործման, ոչ թե հանուն մեր երեխաների ապագայի, այլ հանուն մեր ներկայի:**

**Կստացվի, թե՞ ոչ, այլ հարց է, բայց եթե անգամ չստացվի, ոչ ոք, անգամ մեր երեխաները մեզ չեն կարող մեղադրել, որ մենք անգամ չփորձեցինք ավելի լավը դարձնել եւ ինչն ավելի կարեւոր է՝ ավելի լավը դառնալ:**

ՀՈՎԻԿ ԱՖՅԱՆ

ՆԱԻՐ ՅԱՆ

# Տոնական պտույտ մը Երեւանի թաղերուն մեջ

Լուսավոր, կամարակապ շենքի ներսում անասելի եռուզեռ-երթեւեկ է, օծանելիքի զգլխիչ բույրեր, բարձրակրունկների կտկտոց, դեկոլտեների շքերթ, թանկարժեք կոստյումների մրցավազք: Մի երիտասարդ կոչումների ու մեդալների տուփերով բեռնված, քափուքրտինքի մեջ՝ աստճաններով իջնում է: Շենքի կամարները զարդարված են փուչիկներով ու դրոշակներով, իսկ դրսում զիլ հնչում է երգ-երաժշտությունը: Բազմությունը հավաքվել է, հանդիսություն է սկսվելու:

Սկսվեց... բոցաշունչ ելույթներին հետեւում են վերին հարթակում շարված կանանց ու այրերի որոտընդոստ ծափերը. բոլորի դեմքերը հերոսական խանդավառությունից ու գոհունակությունից փայլում են, ներքեւում խռնված բազմությունը մերթընդմերթ ծափահարում է, դրոշակներն ու փուչիկները թափահարում, սուլում: Մանկապարտեզների, դպրոցների ու պետական այլ հաստատությունների աշխատակիցներին հրահանգել են՝ անպայման ներկա լինել տոնական միջոցառմանը, հակառակ դեպքում՝ անողոք դիտողություն տնօրենության կողմից, ընդհուպ սպիտակ թղթի վրա աշխատանքից ազատման դիմում:

Երթուղային տաքսիների վարորդներին փուչիկներ ու դրոշակներ են բաժանել, նրանք էլ առավոտ կանուխ դրանք ամրացրել են երթուղայինների դիմապակուն: Ընթացքի ժամանակ դրոշակները փռփռացնում են, իսկ փուչիկները՝ փուչիկավարի թեթեւակի հարվածում դիմապակուն: Բայց էլի նույն՝ ուղեւորների տակ ճկռած երթուղայիններն են, էլի նույն՝ կյանքից հոգնած, հոգսի տակ ճկռած վարորդները: Այսօր նրանք ստիպված են փոխել երթուղիները. գծերի տերերը հրահանգել են հատուկ երթուղով շարժվել: Իսկ որպես հասարակական տրանսպորտ ծառայող երթուղայիններին վայն եկել է տարել՝ խցանո՜ւմ, անվերջ, տանջալից խցանո՜ւմ: Բազմությունը վրդովված կիլոմետրեր շարունակ քայլում է. դեռ նախորդ օրվանից է խցանումների ձեռքը կրակն ընկած՝ ոտքով կտրում փողոցները:

Երեւանի տոնն է, ժողովուրդ ջան, դիմացեք, բայց տրամադրություններդ բարձր պահեք: Այն, որ ամբողջ քաղաքը բլոկադայի է ենթարկվել, դրա տույժը քաշեք սիրով, լայն ժպիտով, գորովանքով ու խանդավառված: Դա նեղություն, անհարամարություն չի, դուք չեք հասկանում. դա քաղաքային իշխանությունների՝ ձեզ տրված թանկ սիրո պարգեւն է, վայելե՞ք: Տոնական օրերի խցանումները պաշտոնապես են ընդունվում ու հաստատվում, ինչպես ուզում եք, տակից դուրս եկեք: Ավտոմեքենաների ազդանշանների ապարդյուն ծղրտոցներից մարդու մարմնով էլեկտրական հոսանք է անցնում: Ամբողջ քաղաքի երթեւեկությունը կաթվածահար է եղել, որովհետեւ... տոն է: Իսկ քաղաքային իշխանության նստավայրի վերին հարթակում կանգնածները խորին գոհունակության ու անվրդով խաղաղության մեջ շարունակում են հանդիսավոր ելույթների ու հիացական ծափերի ինքնաբավ վայելքը:



Ճեմուղիներում, պուրակներում, կենտրոնական փողոցներում ու հրապարակներում մանկապատանեկան խմբերը երգում ու պարում են. հենց ելույթն ավարտվում է, մայրիկները երեխաների հագուստներն արագ փոխում են, առաքելությունն ավարտված համարելով՝ շուտ հեռանում: Մի անկարեւոր թվացող հանգամանք եւս. արվեստի դպրոցների սաներն անբեկանելի պարտավորություն ունեն քաղաքային ու համայնքային միջոցառումներին անխտիր մասնակցել, ինչի հաշվին էլ այդ դպրոցների տնօրենները քաղաքային իշխանությունների առաջ լավամարդ են դառնում ու միավորներ շահում: Անհաս-կատարող երեխաներին ու ստեղծագործական խմբերին թե հարցնեք՝ ուրիշ որտե՞ղ են վերջին անգամ ելույթ ունեցել, կպատասխանեն՝ դարձյալ պուրակներում ու բակերում: Ստացվում է, որ ծնողները նրանց գեղարվեստական կրթության համար վճարում են, երեխաների համար ցուցադրական մեկ-երկու համար են պատրաստվում, որպեսզի բակային ու պուրակային տոնակատարություններին ներկայացվեն, ուրիշ ոչինչ: Բայց այդ գեղարվեստական կրթությունը բակային ու պուրակային մակարդակից դեպի լուրջ բեմեր տրամաբանական է, չէ՞, որ մի օր պիտի բարձրանա:

Մակարդա՞կ, բարձրանա՞լ... այս երկու հասկացությունների ուրվականների մասին անգամ անիմաստ է երազել, երբ Երեւանի տոնն է, ու դուք Էրեբունի վարչական շրջանի Էրեբունի փողոցում եք: Արգելոց-թանգարանի դեմ դիմաց, արձանացած Արգիշտի արքայի աչքի առաջ հառնում է փերազակների ու շրջմոլիկ մանրավաճառների շուկան, որի տիրույթում դժվար է հավատալ, որ մի քանի հազարամյակների մշակույթ ու քաղաքակրթություն ունեցող ժողովրդի մեջ ես: Էրեբունի փողոցն անհայտ ցեղատեսակի կեցության վայր է հիշեցնում: Փողոցի երկայնքով մեկ շարված տաղավարներն այդ օրն անվճար տրամադրվում են քյաբաբ ու ադիբուդի, քաղցր բամբակ ու ծղրտոց արձակող խաղալիքներ վաճառողներին: Ու այդ մղձավանջի անունն է՝ երեւանյան տոնավաճառ, արվեստների ու արհեստների ցուցադրություն: Մեկումեջ էլ կտեսնես ինչ-որ ուսումնարանի սաների ձեռագործ աշխատանքներ, որոնք վաճառվելու ապարդյուն ճիգեր են գործադրում: Իսկ երեկոյան երեւանյան տոնավաճառը հասնում է իր հանգուցալուծմանը: Երբ փողոցը վերածված է աղբանոցի, իսկ երթեւեկությունը՝ համառորեն դադարեցված, Էրեբունի անորոշ լույսերը վառվում են՝ խորհրդավորությամբ սքողելով հայոց հինավուրց մշակույթն ու քաղաքակրթությունը, առավել եւս մեր երեքհազարամյա մայրաքաղաքի պատմությունը, եւ սկսվում է քաղաքային իշխանությունների հայտարարած տոնական համերգը: «Չեմ տեսնում ձեր ձեռքերը... մենք սիրում ենք մեր Երեւանը, չէ՞... ով սիրում է Երեւանը, թող ինձ հետ երգի... Երեւան, Երեւան, իմ միակ օթեւան, ես կանցնեմ, կգնամ, դու ապրիր հավիտյան...»,- բեմից ալիքվում է շուբիզնեսի «աստղերի» երեւանյան սերը:

Այդ սերը հաջորդ օրն ավելի բուռն է հորդում Հանրապետության հրապարակի բեմից, որովհետեւ ավելի շատ աչքեր են հետեւում սիրո դրսեւորման հմտություններին ու ջանքերին, նաեւ պաշտոնական, վարձատրող աչքեր: Իսկ վարձատրությունը յուրաքանչյուր երգի...կներեք, յուրաքանչյուր սիրո դիմաց 150 հազար դրամ է: «Երեւան, Երեւան, իմ միակ օթեւան, ես կանցնեմ, կգնամ, դու ապրիր հավիտյան....»: Ի՞նչ կլինի, անցեք գնացեք էլի, միայն թե մի քիչ արագ ու, եթե կարելի է, անվերադարձ:

Էրեբունի-Երեւանի 2797 ամյակին նվիրված տոնակատարություններն այս տարի արժեցել են 160 միլիոն դրամ: Ամեն տարի՝ տոնակատարությունից մեկ ամիս առաջ, հասարակության շրջանում այլընտրանքային ալիք է բարձրանում՝ չեղյալ հայտարարել հանդիսությունները եւ այդ գումարն արդյունավետ ծախսել: Մեր քաղաքը հազար հոգս ու ցավ ունի. ծիլ ու ծաղկով, գազոնով ու թփերով այդ հոգս ու ցավը չես մեղմի ու չես սքողի: Ընդհակառակը՝ ցուցադրական ծիլ ու ծաղիկն ավելի են ընդգծում խորքային հոգսերն ու խնդիրները, դրանք ավելի ցցուն ու անողոք դարձնում: Երեւանի բազմաբնակարանների վերելակները սովետական վաղեմության են ու անլուծելի խնդիր. 160 միլիոն դրամով քանի՞ վերելակի հարց կլուծվեր: Եթե քաղաքային իշխանությունները հանկարծ որոշեին, որ այդ գումարն այս տարի վերելակների վրա են ծախսելու, քանի՞ բնակիչ դժգոհ կմնար: Եթե այդ գումարը ներդնեին հասարակական տրանսպորտի, բնակարանաշինության, շենքերի վերանորոգման, զարշահոտ աղբատարների նորացման, սոցիալական կամ այլ հոգսաշատ ոլորտներում, երեւանցին կնեղանա՞ր մեր քաղաքային իշխանություններից: Ցավն այն է, որ վերին հարթակում կանգնած ինքնաբավ դեմքերից եւ ոչ մեկը գոնե մոտավոր պատկերացում չունի, թե տարրական խնդիրների ինչ ահռելի կույտով է բեռնված շարքային երեւանցու ամեն օրը, այդ թվում եւ՝ տոնական:

- Բալես, էսօր տոն ա, Երեւանի օրն ա, մի քիչ փողով չե՞ս օգնի:

- Տատի ջան, Երեւանի օրն է, բայց աշխատավարձիս օր չի... արի, արի, դե որ քեզ համար տոնական օր է, տոնական էլ 500 դրամանոց եմ տալու,- մեկ-երկու տարեկան դստեր դաստակը բռնած երիտասարդ հայրիկը մյուս ձեռքը գրպանը տարավ ու մի 500 դրամանոց մետաղադրամ հանեց, խոթեց մուրացկան կնոջ բուռը: Հետո թափով գետնից կտրեց աղջնակին, գիրկն առավ ու քայլեց խցանված փողոցով: Հոր գիրկը թառած փոքրիկը շրջվեց դեպի մուրացկանը. թշիկին եռագույն սրտիկ էր նկարված, ձեռքին մեծ, սպիտակ փուչիկ կար, վրան գրված՝ «Իմ ջերմ ու բարի քաղաք»:

ՀՈՎՀԱՆՆԵՍ ՉԱՏԻԿՅԱՆ

# «Հայփոստ», փոսի ՃՈ, Կիլիկիայի ՃՈ - Հարկադիր ծառայություն

Վարորդներին քաջ հայտնի այս շղթան փոխանակ ժողովրդանպաստ գործունեության տարրերը ավելացնելուն, ավելի խճճված կացություն է ստեղծում անձնական օգտագործման մեքենաների տերերի համար:

Ի՞նչ է կատարվում այդ չորս կազմակերպությունների շրջանակներում: Նախ՝ տուգանվածներից շատերը որպեսզի չընկնեն նյարդային քաշքշուկների մեջ, կատարում են վճարում: Բայց երբ այն արտառոց է դառնում, լռելը արդեն վիրավորանք է: «Հայփոստ»-ը առաջին անգամը չէ, որ «իրականացնում» է իր անպարտաճանաչ գործունեությունը: Ստացված տուգանքի ծրարները չեն հասցվում հասցեատիրոջը: Եվ որպես քավության նոխազ ՃՈ է հայտնվում, որ հասցեատիրոջը չեն գտել: ՃՈ-ն գործը ուղղում է Հարկադիր ծառայություն, որտեղ գումարը կրկնակի կամ եռակի է դառնում եւ մատուցվում հասցեատիրոջը:

Համոզվեք, որ կատարվում է օրինազանցություն: Նախ՝ եթե հասցեատերը չի ստացել նամակը, Հարկադիր ծառայությունը ո՞ր օրենքով կամ հիմնավորումով է կրկնապատկում գումարը եւ կալանք դնում հասցեատիրոջ հաշվի վրա:

Երկրորդ՝ բազմաթիվ բողոքները ինչո՞ւ չեն արժանանում ուշադրության: ՃՈ-ն քաջ գիտի, որ տուգանքը չի հասել հասցեատիրոջը: Ինչու նրանք համապատասխան դիմում հայցին չեն կցում այդ տեղեկանքը:

Երրորդ՝ Հարկադիր ծառայությունը ինչո՞ւ չի հետաքննում արդեն ուռճացված տուգանքաչափը, չի հիմնավորում իր գործելակերպը, չի պատժում «Հայփոստ»ին ՃՈ-ի համապատասխան բաժիններին:

Բնական հարց է եթե չեմ ստացել նամակը, ինչպե՞ս վճարեմ:

Փոստային այն բաժանմունքը գտնվում է իմ տան դիմաց, շաբաթը մի քանի անգամ մտնում եմ այնտեղ: Թիվ 79 բաժանմունքի աշխատակիցները եթե բարեխիղճ լինեին, 2015թ. մարտ-օգոստոս ամիսներին ինձ կհանձնեին նամակը եւ 5000 դրամ տուգանքը, գումարած Հարկադիրի «ծառայության» գումարը չէր բարգավաճի ու հասնի 12500 դրամի:

Պատճառաբանություններ կան, բոլոր չորս օղակներն էլ գիտեն իրենց բացթողումները, բայց կոծկում են: Իսկ ինչպես կկոծկեն նրանք արտառոց այն դեպքը, երբ երկու անգամ չստացած ու նամակում փոխված ազգանունով են ուղարկում տուգանքածրարը: Մի՞թե թե՛ ՃՈ-ն, թե՛ Հարկադիրը անկարող են ճշտել իրականությունը: Նրանք դրա ժամանակը չունեն, նրանց պարտականությունը տուգանելն ու գանձելն է:

Պատճառաբանում են, որ իրենց Ազգային ժողովն է տվել վարվելակերպի նման արտոնություն: Պարոն պատգամավորներ, մեր վսեմափայլ ընտրյալներ, բնական է, Ձեզ տուգանքներ չեն ուղարկում, Ձեր, նախարարների, միջին ու բարձր պաշտոնյաների մեքենաների համարանիշները «գրանցված են», բայց երբ քվեարկում էիք այդ օրինագծերի օգտին, գոնե մեկ վայրկյան կշռադատո՞ւմ էիք, թե ի՞նչ լիազորություններ եք տալիս կողոպուտի մարմիններին, մեկ անգամ գոնե հիշո՞ւմ էիք, որ արված ու չարված խախտումների պատճառով, որոնք հավասարազոր են հանցանք եւ զանցանք հասկացություններին, ի՞նչ անկրելի վիճակի մեջ են գցում սեփականատեր վարորդներին: Վստահ եմ, որ չեք մտածել այդ մասին: Իմ նամակը հիշեցնում է Ձեզ, ուղղե՛ք կատարված սխալները: Պատրաստ եմ թեկուզ իմ օրինակով Ձեզ բացահայտել ճշմարտությունը: Դիմում եմ նաեւ փառապա՜նծ քառյակի ղեկավարներին՝ վերադարձրեք իմ կայուն հոգեվիճակը, որպեսզի կարողանամ մեքենա վարել, վերադարձրեք ինձանից խլված դրամական միջոցները...

Պրոֆ. ՆԻԿՈԼԱՅ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

*Արաբական արդի պատմագիտությունը*

# Հայկական ջարդերի եւ Հայոց ցեղասպանության իրականացման մեջ Քրդական գործոնի դերակատարման մասին



Արաբական արդի պատմագիտությունը Հայոց ցեղասպանության հիմնահարցերի խորքային ուսումնասիրության, ընդգրկված խնդիրների բազմաշերտ ծալքերի բացահայտման, եզակի նյութերի եւ փաստաթղթերի գիտական շրջանառության մեջ դնելու եւ մեկնաբանությունների ու գնահատականների վստահության բարձր աստիճանի առումով, յուրօրինակ տեղ է գրավում ցեղասպանագիտության համակարգում, իսկ որոշ դեպքերում՝ ուղղակի անմրցելի է:

Իսկ ինչո՞վ է դա բացատրվում:

Առաջին, արաբական երկրները ավելի քան չորս դար՝ 1516-1918թթ., Օսմանյան կայսրության մասն են կազմել: Սակայն դա եղել է ոչ թե կամավոր միացում, այլ նվաճման արդյունք: Օսմանյան-թուրքական չորսդարյա բռնատիրական լուծը, ինչպես նշում են արաբ հետազոտողները, աղետաբեր եղավ արաբների համար: Արաբները օսմանյան կայսրությունը գիտեն ոչ թե հեռվից կամ գրականությունից, այլ ներսից, որպես օսմանյան սուլթանների հպատակներ, օսմանյան դաժանության, վայրագության եւ սարսափների կրողներ: Պատահական չէ, որ հենց արաբները սուլթան Աբդուլ Համիդ II-ի դարաշրջանը՝ 1876-1909թթ., անվանեցին «Զուլումի դարաշրջան»: «Զուլում» եզրը արաբերեն բառ է, որը նշանակում է «բռնակալություն», «դիկտատուրա», «միահեծանություն» եւ այդ իմաստով էլ ընկալվեց աշխարհում: Սակայն նա ունի նաեւ ողբերգության, աղետի եւ դժբախտության երանգավորում եւ, օրինակ, հայերը այդպես են ընկալում եւ այդ իմաստով են գործածում զուլում բառը:

Կարծում ենք, որ քրդական գործոնի դերակատարումը հայկական կոտորածների հարցում պետք է դիտարկել համիդյան զուլումի համատեքստում, մասնավորապես Համիդիե հեծելազորի ստեղծումը եւ նրա վայրագ գործողությունները Արեւմտյան Հայաստանի տարբեր հայաբնակ վայրերում : Այդ բանդիտա-ավազակային զորախումբը, ինչպես նշում են արաբ մասնագետները, ստեղծվել էր սուլթան Աբդուլ Համիդի հրամանով բացառապես քրդերից եւ նրա գլխավոր խնդիրը հայերին բռնության եւ սարսափի մեջ պահելն ու հայկական ջարդեր կազմակերպելն էր ( Ֆուադ Հասան Հաֆիզ, Հայ ժողովրդի պատմությունը սկզբից մինչեւ մեր օրերը, Կահիրե, 1986, արաբերեն ):

Երկրորդ, երկարատեւ պատերազմներից հետո, շահական Պարսկաստանը եւ օսմանյան Թուրքիան 1639թ. Կասր ի Շիրինում ստորագրեցին պայմանագիր, որով Հայաստանը բաժանվեց նրանց միջեւ: Արեւելյան Հայաստանը մնաց Պարսկաստանի կազմում, իսկ Արեւմտյան Հայաստանն անցավ օսմանյան Թուրքիայի տիրապետության տակ: Հայաստանի արեւմտյան հատվածն անցավ Ալթայից եւ Միջին Ասիայից Փոքր Ասիա ներխուժած մի նոր էթնոսի՝ քոչվորական անասնապահ օղուզ թուրքերի տիրապետության տակ, եւ տարածաշրջանի բնիկ տերերը՝ հայությունը, հայտնվեց մի այնպիսի անկառավարելի էթնոսի հարեւանությամբ, ինչպիսին քրդերն էին, որոնք իրենց հետամնացությամբ ու ընչաքաղցությամբ ոչնչով չէին զիջում իրենց տերերին՝ թուրքերին: Եվ սկսվեց Արեւմտյան Հայաստանի վարչատարածքային մարզերի անընդմեջ վերաձեւումը, նպատակ ունենալով նպաստել թուրքական եւ քրդական էթնոսի թվական գերակայությանը՝ ի հաշիվ հայերի թվաքանակի նվազեցման իր բնօրրանում: Արաբ պատմաբանները նկատել են, որ թուրքերի, քրդերի եւ չերքեզների բնակեցումը հայկական շրջաններում եւ տեղաբնիկ հայերի պապենական հողերի բռնագրավումը հարցի մի կողմն էր: Հարցի մյուս կողմն այն էր, որ օսմանյան իշխանություններն անընդհատ բախումներ եւ ընդհարումներ էին հրահրում եկվոր մահմեդականների՝ թուրքերի, քրդերի, չերքեզների եւ տեղաբնիկ հայերի միջեւ, քրդերի եւ չերքեզների ձեռքով իրականացնելով հայկական ջարդեր , պաշտպանելով մահմեդականներին ընդդեմ հայերի:

Կարելի է վստահաբար ասել. որ առանց 1639թ. եւ դրանից հետո իրականացված թուրք-քրդական հակահայկական քաղաքականության, չէր լինի 1915թ.:

Երրորդ, հայտնվելով հետամնաց, բարբարոսական սկզբունքների վրա խարսխված Օսմանյան կայսրության կազմում, հայերը դարձան դեռեւս 1516թ. նվաճված արաբների հարեւանները ու բախտակիցները: Մենք ժամանակին այն տեսակետն ենք արտահայտել, որ արաբները եւ հայերը, հայտնվելով միեւնույն Օսմանական կայսրության տիրույթում եւ տիրապետության տակ, դարձան բախտակից ժողովուրդներ, նրանց հակառակորդը միեւնույն օսմանյան դաժան լուծն էր, նրանց խնդիրները նույնն էին՝ պայքար օսմանյան բռնատիրության դեմ, ազգային ինքնության պահպանում եւ տարրական իրավունքների պաշտպանություն: Մեր այս տեսակետն ընդունվել է արդի արաբագիտության կողմից: Այդ կապակցությամբ լիբանանյան արաբ հայտնի պատմաբան Սալեհ Զահր ալ-Դինը գրում է, որ «Ինքը լրիվ համամիտ է պրոֆ. Ն. Հովհաննիսյանի այն տեսակետին, որ «Դեռեւս XIX դարի վերջին-XX դարի սկզբին արաբական եւ հայկական քաղաքական միտքը հանգեց այն եզրակացության, որ արաբների եւ հայերի ազգային շահերը համընկնում են, որ նրանք տառապում են միեւնույն օսմանական լծից եւ ունեն մի ընդհանուր թշնամի՝ օսմանյան բռնապետությունը, հետեւաբար՝ նրանք բախտակից ժողովուրդներ են» (Սալեհ Զահր ալ-Դին, Օսմանյան կառավարության քաղաքականությունն Արեւմտյան Հայաստանում եւ մեծ տերությունների քաղաքականությունը Հայկական հարցում, Բեյրութ, 1996, էջ 28-29, արաբերեն եւ հայերեն ): Ի պաշտպանություն մեր այդ տեսակետի են հանդես եկել նաեւ Ումար ալ Դակակը, Ադնան ալ-Սայիդ Հուսեյնը եւ ուրիշներ: Արաբա-հայկական բարեկամական համագործակցությունը, բնականաբար, ենթադրում էր հայերի կողմից արաբների ազգային իրավունքների պաշտպանություն ընդդեմ օսմանյան իշխանությունների հակաարաբական քաղաքականության, եւ արաբների կողմից հայերի իրավունքների պաշտպանություն՝ ընդդեմ թուրք-քրդական հակահայկական քաղաքականության:

Այսպիսով, հենվելով վերոշարադրյալ նյութի եւ արաբական հեղինակների ինքնատիպ դիտարկումների վրա, կարելի է ներկայացնել հայկական հարցում ուժերի դասավորության եւ այդ ուժերից յուրաքանչյուրի գործառույթի հետեւյալ սխեման. թուրքեր (իշխանություններ )՝ դահիճներ- քրդեր եւ չերքեզներ՝ դահիճների կամակատար ջարդարար օգնականներ- հայեր՝ զոհեր, եւ արաբներ՝ զոհերի, հայերի, որպես բախտակից ժողովրդի պաշտպաններ:

❖❖❖

Քրդական գործոնը տիպաբանորեն պատկանում է Հայոց ցեղասպանության իրականացման առանցքային հարցերին: Օսմանյան կառավարողները, օգտագործելով քրդերին որպես զենք հայերին բնաջնջելու գործում, հարստացրին իրենց դահճային զինանոցը: Արաբ հեղինակներն առաջնայինը համարելով օսմանյան ղեկավարության քաղաքականությունը , իսկ քրդերի հակահայկական գործունեությունը դիտելով որպես դրանից բխող երեւույթ, բնավ չեն ցանկացել դույզն ինչ նվազեցնել քրդերի պատմական պատասխանատվությունը: Քրդերն ունեն մեղքի իրենց բաժինը եւ գիտությունը չի կարող դա անտեսել: Ահա թե ինչու նրանք այդքան մեծ տեղ են հատկացրել քրդերի մասնակցությանը հայկական կոտորածներին եւ 1915թ. ցեղասպանությանը:

Ֆուադ Հասան Հաֆիզը, Մուսա Պրենսը, Մարվան ալ-Մուդավարը, Ուսման ալ-Թուրքը, Մուհամմադ Ռիֆաթ ալ-Իմամը եւ արաբ այլ հետազոտողներ, հանգամանորեն անդրադարձել են քրդերի հակահայ գործունեությանը՝ կապված Հայկական հարցը միջազգային դիվանագիտության հարցի վերածվելու, 1977-1978թթ. ռուս-թուրքական պատերազմից հետո կնքված Սան Ստեֆանոյի հաշտության պայմանագրի (1978թ. մարտի 3) եւ Բեռլինի կոնգրեսի (1978թ. հունիսի 13 -հուլիսի 13) տրակտատի հետ: Արաբ պատմաբանները դրական են գնահատել Սան Ստեֆանոյի պայմանագիրը, հատկապես նրա 16-րդ հոդվածը, որում արձանագրված էր. «Բարձր Դուռը (իմա Օսմանյան կայսրությունը-Ն.Հ.) պարտավորվում է անհապաղ կենսագործել հայաբնակ մարզերի տեղական կարիքներից հասունացող բարելավումներ եւ բարենորոգություններ, եւ զերծ պահել հայերի անվտանգությունը քրդերից եւ չերքեզներից»: Արաբ պատմագիրների համար տվյալ դեպքում ամենակարեւորը հայերի անվտանգության ապահովումն էր քրդական եւ չերքեզական հարձակումներից, կողոպուտներից եւ թալանից: Կար նաեւ եւս մեկ այլ պայման, որը չի վրիպել արաբ հեղինակների աչքից: Ըստ Սան Ստեֆանոյի պայմանագրի, Օսմանյան կողմը համաձայնվում էր, որ Արեւմտյան Հայաստանում ռուսական զորքերը կմնան վեց ամիս ժամանակով , որի ընթացքում Արեւմտյան Հայաստանում պետք է կիրառվեին բարենորոգումները: Ռուսական զորքերի ներկայությունն արաբ հեղինակներն իրավացիորեն ընկալել են բարեփոխումների եւ հայության անվտանգության երաշխիք:

Սան Ստեֆանոյի պայմանագիրը դիտարկվեց որպես ռուսական դիվանագիտության հաղթանակ եւ Մեծ Բրիտանիային ու Ավստրո-Հունգարիային հաջողվեց Գերմանիայի կանցլեր Օտտո Բիսմարկի աջակցությամբ 1878թ. հասնել Բեռլինում կոնգրեսի գումարման, որը վերանայեց Սան Ստեֆանոյի պայմանագիրը, այդ թվում եւ նրա 16-րդ հոդվածը, որը Բեռլինի տրակտատում վերածվեց 61-րդ հոդվածի: Սակայն նրանում տեղ չգտավ Հայաստանում բարեփոխումների իրականացումը ռուսական զորքերի ներկայությամբ դրույթը, որը երաշխիքներ էր տալիս ոչ միայն բարեփոխումների կիրառմանը, այլեւ հայերի անվտանգությունը զերծ պահում քրդական եւ չերքեզական հարձակումներից: Արաբ պատմաբանները դա համարեցին խիստ վտանգավոր հայերի անվտանգության ապահովման տեսակետից (Տե՛ս Մարվան ալ-Մուդավար, Հայերը պատմության ընթացքում, Բեյրութ, 1982, արաբերեն ): Այդ բոլորի հետեւանքով ոչինչ չփոխվեց հայերի նկատմամբ օսմանյան քաղաքականության մեջ: Բարեփոխումները չկիրառվեցին եւ դրանում արաբ պատմաբանները մեղադրում են ոչ միայն սուլթան Աբդուլ Համիդ II -ին եւ քրդերին, այլեւ մեծ տերություններին, առաջին հերթին Մեծ Բրիտանիային եւ Գերմանիային: «Անգլո-ռուսական մրցակցությունը եւ բիսմարկյան մաքիավելիզմը ,- գրում է արաբ պատմաբան Մուսա Պրենսը,- թույլ չտվեցին Սան Ստեֆանոյի պայմանագրի 16-րդ հոդվածի իրականացումը» ( Moussa Prince, L´Armenocide, Liban, 1975, p.75 ): Իսկ Ֆուադ Հասան Հաֆիզը եւ Ուսման ալ-Թուրքը հավելում են, որ Մեծ Բրիտանիան անհանգստությամբ էր նայում ցարական Ռուսաստանի ուժեղացմանը եւ նեղուցների վրա նրա վերահսկողությունը հաստատելու առաջխաղացմանը եւ նրան ստիպեցին իր զորքերը դուրս բերել Արեւմտյան Հայաստանից եւ Թուրքիային վերադարձնել Էրզրումն ու Բայազետը: Եվ հայերը միայնակ մնացին թուրքերի ու քրդերի դեմ-հանդիման, իսկ Ուսման ալ-Թուրքի դիպուկ բնութագրությամբ, Արեւմտյան Հայաստանում բարեփոխումները եւ հայերին քրդերից ու չերքեզներից ապահովագրելը մնացին «տեսական ցանկություններ, որոնց իրականացման համար ոչ մի քայլ չձեռնարկվեց» (Ուսման ալ-Թուրք, էջեր հայ ազգի պատմությունից, Հալեպ, 1960, էջ 189, արաբերեն): Հետաքրքրական է նաեւ նրա կարծիքն առ այն, որ մեծ «պետություններն անկեղծ չէին հայերին թուրքական ստրկությունից ազատագրելու հարցում»:

Բեռլինի կոնգրեսից հետո հայերի կոտորածներն ավելի մեծ ծավալներ ընդունեցին, որում ակտիվորեն ներգրավվեցին քրդերը: Բեռլինի կոնգրեսից հետո, 1891 թ., կազմավորվեց քրդական Համիդիե հեծելազորը, որի մասին մենք արդեն նշել ենք:

⇨8

AZG NEW SHABAT 1.QXD 15/10/2015 22:25 Page 8



# Թուրք-ադրբեջանական կեղծարարության նոր էջ

*«1905-ին եւ 1924-ին Գյանջայում մահմեդականների դեմ հայերի իրագործած ոճրագործությունները»*

Ադրբեջանական Գյանջայում մեկնարկել է Աթաթուրք միջազգային 8- րդ կոնֆերանսը, որ «նոր լույս է սփռում պատմության առանձին էջերին»: Ինչպես ծանուցում է ադրբեջանական azertac լրատվական պետական գործակալությունը հոկտեմբերի 13-ին, օսմանական արխիվներում «գտնվել են փաստաթղթեր, որ վկայում են Գյանջայի մահմեդականների դեմ հայերի գործած հանցագործությունների մասին »: Կոնֆերանսի մասնակից Թուրքիայի Հանրապետության նախարարների կաբինետին առընթեր պետական արխիվի տնօրեն Ուգուր Ունալը հայտնել է վերոհիշյալը եւ հավելել, թե « միջազգային կոնֆերանսը Ադրբեջանի եւ Թուրքիայի 19 եւ 20- րդ դարերի պատմական իրադարձությունները վերահետազոտելու, պատմական կեղծված իրականությունը ճշմարտացի ներկայացնելու նպատակ է հետապնդում»: «Ստամբուլի օսմանական արխիվն աշխարհում հարուստներից մեկն է, պատմական փաստաթղթերի հետ մեկտեղ այստեղ առատ նամակագրություն է պահպանվում ադրբեջանական խանությունների եւ օսմանական պետության միջեւ, դրանցից կարեւորների պատճենները բերել ենք այստեղ ներկայացնելու, դրանց թվում նաեւ այնպիսի փաստաթղթեր, որ վկայում են Կովկասյան իրադարձությունների մասին, ինչպես նաեւ 1905-ին եւ 1924-ին Գյանջայում մահմեդականների դեմ հայերի իրագործած ոճրագործությունները: Կան նաեւ փաստաթղթեր, որ վկայում են, թե հրետանին քաղաքացիական բնակչության վրա կրակ է բացել: Ապագայում ադրբեջանցի պատմաբանների հետ կուսումնասիրենք փաստերն ու դրանք կներկայացնենք միջազգային հանրությանը», ծանուցել է թուրքական արխիվի տնօրենը:



Գյանջան Ադրբեջանի երկրորդ մեծ քաղաքն է, հայկական Գանձակն է՝ Արեւելյան Հայաստանի պատմական Ուտիք նահանգում, այնուհետ դարձել է Ելիզավետպոլ, 1935-ին ` Կիրովաբադ, իսկ նոր կամ Գանձակի հնչյունափոխված Գյանջա անունն է կրում 1991 թվականից: Այն, որ հարեւան երկրում քրտնաջան աշխատում են իրենց երկրի պատմությունը վերակազմելու, իրենց եւ հատկապես օտարներին համոզելու հարցում, հայելի է դարձնում պետական վերոհիշյալ գործակալությունը: Հոկտեմբերի 14-ին նույն աղբյուրն իրազեկում է, թե Ադրբեջանի գիտությունների ակադեմիայի Աշխարհագրության ինստիտուտը հանրությանն է ներկայացրել «Ադրբեջանի Հանրապետության աշխարհագրություն» եռահատոր մենագրությունը: Հրատարակության կարեւորության մասին խոսել է ինստիտուտի տնօրեն Ռամիզ Մամմադովը:Հասկանալի է իհարկե, թե ինչու պետական լրատվական գործակալությունը վերոնշյալ նյութերը հապճեպ տարածում է օրինակ՝ գերմաներեն, անգլերեն լեզուներով, իսկ դրանց ռուսերեն տարբերակները, որքան էլ փնտրեցինք, մեզ հասանելի չեղան:

**ԱՆԱՀԻՏ ՀՈՎՍԵՓՅԱՆ**
**Գերմանիա**

# Հայկական ջարդերի եւ Հայոց ցեղասպանության...

⇨7

Այստեղ հարկ է ավելացնել, որ նա բացառապես կազմված էր քրդերից, որոնց արաբական աղբյուրների համաձայն՝ գլխավորապես Դիարբեքիրի քրդերից, եւ նրա զորակայանը տեղակայված էր հայկական Երզնկա քաղաքում: Աբդուլ Համիդի հրամանով ստեղծված եւ օսմանյան կառավարության հաշվին պահվող քրդական այդ հեծելազորը բաղկացած էր 30 գնդերից: 1894-1896թթ. Օսմանյան կայսրությունում իրագործվեցին հայկական նոր ջարդեր, որոնք ծավալների առումով մինչ այդ իրենց նախադեպը չեն ունեցել: Այս անգամ եւս Աբդուլ Համիդ II-ի գլխավոր զենքը, ինչպես հաստատում են արաբ հեղինակները, հանդիսացան քրդական Համիդիե հեծելազորը ու Մուսա բեկի տիպի քրդական ցեղապետները: Սալեհ Զահր ալ-Դինը մատնանշում է, որ Աբդուլ Համիդն իր հակահայկական գործողությունների կենտրոն է դարձնում Սասունը, համարելով այն «ըմբոստ շրջան, որը պետք է հնազանդեցնել: Եվ սասունցիներին բնաջնջելը որոշվեց իրագործել քրդերի ձեռքով» (Սալեհ Զահր ալ-Դին, նշվ. աշխ.): Բիթլիսի նահանգապետ Թահսին փաշան 1891թ. իր մոտ է կանչում քրդական գիլան ցեղի քուրդ ցեղապետներին եւ սուլթան Աբդուլ Համիդի անունից պահանջում ջիհադ՝ սրբազան պատերազմ սկսել հայերի դեմ: Սակայն, ինչպես վկայում է արաբ պատմաբանը, «Ջիհադ տեղի չունեցավ ո՛չ 1891, ո՛չ 1892 եւ ոչ էլ 1893թ., քանի որ քուրդ ցեղերի մի մեծ թեւ, դեմ լինելով նման պատերազմի, հրաժարվեց մասնակցել դրան: Թեեւ որոշ քրդական ցեղեր տեղական բնույթի հարձակումներ գործեցին ավարի ակնկալիքով, սակայն համատարած հարձակումներ տեղի չունեցան: Ընդհակառակը, 1891-1892թթ. հայտնի են հայ-քրդական համագործակցության դեպքեր Սասունի գյուղերում՝ ընդդեմ թուրքերի»:

Դժբախտաբար, հայ քրդական նման համագործակցությունը քուրդ ցեղապետների եւ օսմանյան սուլթանի մեղքով, չդարձավ մշտական գործոն եւ չվերածվեց մշակված ու գիտակցված քաղաքականության: Դա հաստատում են արաբ հեղինակները, վկայակոչելով «Սասունի դեմ 1894թ. ձեռնարկված թուրք-քրդական ռազմական գործողությունները», Համիդիե զորագնդի վայրագությունները Բահա ալ-Դին փաշայի գլխավորությամբ» եւ այլն: Արաբ հեղինակները նշում են, որ արյունարբու սուլթանը հետագայում եւս բազմիցս քրդերին օգտագործել է հայերի դեմ եւ նրանց ձեռքով իրականացրել հայերի կոտորածները, ինչպես 1903թ., երբ Անատոլիական 4-րդ բանակի հրամանատար Զաքի փաշան, կատարելով սուլթանի հրամանը, սպառնաց քրդական ցեղերի դեմ խիստ միջոցներ ձեռնարկել, եթե նրանք չմասնակցեն Սասունի դեմ նոր հարձակմանը: Եվ նա ոտքի հանեց 25000 զինյալ քրդերի՝ ընդդեմ Սասունի հայերի:

Եվ այդպես շարունակաբար, ընդհուպ 1915թ. , երբ սկսվեց Հայոց Մեծ Եղեռնը:

❖❖❖

Քրդերը դարձան Հայոց ցեղասպանության անմիջական մասնակիցներ նրա առաջին իսկ օրվանից, որը սադիստական սառնասրտությամբ իրականացրին երիտթուրքական դահիճները, հետամուտ լինելով Օսմանյան կայսրությունը էթնիկապես «մաքուր թուրքական պետության» վերածելու ռասիստական ծրագրի կենսագործմանը: Համաձայն այդ դիվային ծրագրի, Օսմանյան կայսրությունում բնակվող բոլոր ազգությունները պետք է դառնային թուրքեր՝ կամովին, կամ էլ բռնությամբ: Իսկ համառորեն հրաժարվող ժողովուրդները պետք է ենթարկվեին ֆիզիկական ոչնչացման: Ուշագրավն այն է, որ երիտթուրքերի հեռահար ծրագրերով թուրքացման ենթակա էին ոչ միայն քրիստոնյա ժողովուրդները՝ հայերը, հույները եւ ասորիները, այլեւ իսլամադավան ժողովուրդները՝ արաբները, քրդերը, չերքեզները եւ այլք: Մուսուլման արաբները հրաժարվեցին ենթարկվել երիտթուրքական այդ դիվային պահանջին եւ 1916թ. ապստամբեցին օսմանյան իշխանությունների դեմ, որը պատմության մեջ մտել է որպես «Արաբական մեծ ապստամբություն», եւ իրենց լուման ներդրեցին Առաջին համաշխարհային պատերազմում Օսմանյան կայսրության պարտության գործում: Իսկ ինչ վերաբերում է մուսուլման քրդերին, ապա նրանք, ի տարբերություն արաբների, անհեռատեսորեն կրկին գործիք դարձան երիտթուրքերի ձեռքին՝ հայերին իրենց բնօրրանում բնաջնջելու թուրքական հրեշային ծրագրի իրականացման գործում: Դա նկատել եւ դատապարտել են ոչ միայն արաբները, այլեւ այլ ժողովուրդներ եւ երկրներ:

Այդ տեսակետից խիստ կարեւոր է Անտանտի հիմնադիր երեք պետությունների՝ Մեծ Բրիտանիայի, Ֆրանսիայի եւ Ռուսաստանի կառավարությունների 1915թ. մայիսի 24-ի համատեղ հայտարարությունը, որում ի լուր աշխարհի հայտարարվում էր. «Վերջին ամիսներին Հայաստանի քրդերը եւ թուրքական բնակչությունը զբաղված են հայերի կոտորածներով: Օսմանյան իշխանությունների թողտվությամբ եւ հաճախ նրանց օգնությամբ նման կոտորածներ են տեղի ունեցել ապրիլի կեսերին Էրզրումում, Դերջանում, Ակնում, Բիթլիսում, Սասունում, Մուշում, Զեյթունում եւ ամբողջ Կիլիկիայում: Վանի մերձակա 100 գյուղերի համարյա ամբողջ բնակչությունը ոչնչացվել է: Վան քաղաքի հայկական թաղերը շրջապատվել եւ դեռ շրջապատված են քրդերի կողմից: Ի տես Թուրքիայի կողմից այս թարմ ոճրագործությունների , դաշնակից կառավարությունները հայտարարում են Բարձր Դռանը, որ օսմանյան կառավարության բոլոր անդամները, ինչպես նաեւ դրանց մասնակցած գործակալները, անձնապես պատասխանատու են հայկական կոտորածների համար»: Դրա համար պատասխանատու էին համարվում նաեւ քրդերը: Մեզ մնում է ավելացնել, որ Մեծ Բրիտանիայի, Ֆրանսիայի եւ Ռուսաստանի այդ նախազգուշացումը չսթափեցրեց երիտթուրքերին եւ քրդերին, որոնք շարունակեցին հայերի ֆիզիկական վերացման իրենց արյունոտ գործը, որի ընթացքում XX դարի առաջին ցեղասպանությանը զոհ գնաց 1,5 միլիոն հայ:

Մենք Հայոց ցեղասպանության խնդիրներին, այդ թվում եւ քրդերի մասնակցությանը ու արաբների մարդասիրական դիրքորոշմանը անդրադարձել ենք մեր բազմաթիվ աշխատություններում, որոնք լույս են տեսել նաեւ օտար լեզուներով արտասահմանյան մի շարք երկրներում: Դրան մենք անդրադարձել ենք նաեւ մի շարք հոդվածներում, այդ թվում եւ «**Ազգ**»-ի էջերում (Տե՛ս «Քրդական պատասխանատվություն», «**Ազգ**», 2 հոկտեմբեր 2015, էջ 7-8), որոնք մատչելի են ընթերցողներին: Ուստի անհրաժեշտ չենք գտնում կրկին անդրադառնալ այդ նյութին: Միայն ավելացնենք երկու կարեւոր հանգամանք: Առաջին, արաբական միջավայրում առաջացավ մի շատ կարեւոր գիտական տերմին , որը մինչ այդ հայտնի չէր: Խոսքը «Արմենոցիդ» տերմինի մասին է, որը շրջանառության մեջ դրեց լիբանանցի արաբ պատմաբան Մուսա Պրենսը: Նա այդ տերմինը ստեղծել է հենվելով Ռաֆայել Լեմկինի հայտնագործած «գենոցիդ» տերմինի վրա: Դա քաղաքական տերմին է, որի տակ հստակորեն հասկացվում է արմենների՝ հայերի, որպես ցեղատեսակի , էթնոսի ամբողջական ոչնչացում, որի հայկական համարժեքը «հայասպանությունն» է: Ըստ որում Մուսա Պրենսը գտնում է, որ «Արմենոցիդը ամենագենոցիդային գենոցիդն է»: Եվ հանուն ճշմարտության հարկ է նշել, որ քրդերը բացասական իմաստով իրենց «արժանի» լուման են ներդրել թե՛ այդ եզրույթի առաջացման եւ թե՛ ամենագենոցիդային գենոցիդի իրականացման գործում:

Երկրորդ, արաբ պատմաբանների մոտ կասկած չկա, որ 1915թ. հայերի հետ պատահած իրադարձությունները ոչ թե սովորական ջարդեր էին, այլ ցեղասպանություն:Արաբ հեղինակները, Ֆուադ Հասան Հաֆիզը, Սամիր Արբաշը, Սալեհ Զահր ալ-Դինը եւ այլք, գտնում են, որ «Հայոց ցեղասպանությունը XX դարի սեւ էջն է»: Ուստի միանգամայն տեղին կլինի ասել, որ քրդերը, նրանց բեկերը եւ ցեղապետները պատմության սեւ էջը գրելիս երիտթուրքական դահիճների աջ ձեռքն են եղել:

❖❖❖

Ուղիղ մեկ դար է անցել Հայոց ցեղասպանությունից: Այդ ընթացքում ահագին ջրեր են հոսել եւ շատ բան է փոխվել աշխարհում: Հայոց ցեղասպանությունը դադարել է համարվել «Մի մոռացված ցեղասպանություն»: Նա արդեն միջազգայնորեն ճանաչված ցեղասպանություն է, որի գագաթնակետը հանդիսացավ 2015թ. : Սակայն դեռ կան անելիքներ: Հայոց ցեղասպանության գլխավոր մեղավոր Օսմանյան Թուրքիայի իրավահաջորդ արդի Թուրքիայի կառավարությունը համառորեն չի ուզում ճանաչել օսմանյան լեգիտիմ դատարանի որոշումը, որը երիտթուրքերի բարձրագույն ղեկավարությանը դատապարտեց մահվան, այդ թվում եւ Հայոց ցեղասպանության իրականացման համար: Անորոշ եւ խուսափողական է նաեւ մարդկության դեմ ուղղված այդ հանցագործության մյուս մեղավորի՝ Թուրքիայի քրդերի ղեկավարության դիրքորոշումը, որոնք այսօր ըստ էության պայքարում են իրենց իրավունքների համար՝ հրապուրված պետականություն ունենալու հեռանկարով: Բայց ո՞րտեղ: Ո՞ր տարածքում: Նրանք մոռանում են, որ իրենք սոսկ Արեւմտյան Հայաստանի բնակիչներ են եւ ոչ ավելին: Խորհրդի կարգով կցանկայի նրանց ասել, որ չի կարելի պայքարել պետականության համար ուրիշի պետականության տարածքների վրա նստած : Դրա համար ոչ միայն Հիսուս Քրիստոսն է պատժում, այլեւ Ալլահը եւ նրա առաքյալ Մուհամմադը:

Այնուամենայնիվ, զգուշությունը լավ բան է:

AZG NEW SHABAT 1.QXD 15/10/2015 22:25 Page 9



# ԱՏՈՄ նախագիծ՝ աշխարհն առանց միջուկային զենքի

206 701 մարդ Երկիր մոլորակի վրա այս նյութը գրելու ժամանակ ասացին իրենց խոսքը համաշխարհային առաջնորդներին, պահանջելով նրանցից աշխարհ առանց միջուկային զենքի: Այդպիսի միջնորդագրի տակ կարելի է ստորագրել «Ատոմ» միջազգային ծրագրի կայքում, որի հեղինակն է հանդիսանում Ղազախստանի Հանրապետությունը (theatomproject.org): ԱՏՈՄ նախագծի անվանումը կազմված է անգլերեն չորս բառերի առաջին տառերով Abolish Testing - Our Mission («Փորձարկումներից հրաժարվելը մեր առաքելությունն է»): Սա Ղազախստանի նախագահ Նուրսուլթան Նազարբաեւի հերթական նախագիծն է, որը նպատակաուղղված է առանց միջուկային զենքի աշխարհի ստեղծմանը: ԱՏՈՄ նախագծի իմաստը այն է, որ մեր մոլորակի մարդիկ սկսեն ազդել իրենց կառավարության վրա, որպեսզի վերջ տան բոլոր միջուկային փորձարկումներին Երկիր մոլորակի վրա:

1991 թվականի օգոստոսի 29-ին Ղազախստանի նախագահի նախաձեռնությամբ փակվել է Սեմիպալատինսկի միջուկային փորձարկման վայրը, որտեղ առնվազն 468 միջուկային փորձարկումներ են կատարվել: Կա վիճակագրություն, ըստ որի՝ Ղազախստանի հողերի վրայի իրականացված միջուկային պայթյունների ընդհանուր հզորությունը 2,5 հազար անգամ գերազանցել է Հերոսիմայի վրա նետված ատոմային ռումբի հզորությունը, իսկ Սեմիպալատինսկում տեղի ունեցած պայթյունների ընդհանուր հզորությունը հավասարվում էր 116 «չեռնոբիլների»: Հնարավոր է հենց այդ սարսափելի թվերն ու դրանց հետեւանքները դրդեցին նախագահ Նուրսուլթան Նազարբաեւին դառնալ միջուկազերծ աշխարհի մոլի պաշտպանը: Հենց նրա նախաձեռնությամբ օգոստոսի 29-ը հայտարարվեց միջուկային փորձարկումների դեմ գործողությունների միջազգային օր, որը միաձայն ընդունվեց Միավորված ազգերի կազմակերպության Գլխավոր ասամբլեայի 64-րդ նստաշրջանում (64/35 բանաձեւ առ 2 դեկտեմբերի 2009 թ.): Այդ ժամանակ Հայաստանը ոչ միայն աջակցեց Ղազախստանի նախաձեռնությանը, այլեւ դարձավ «Միջուկային փորձարկումների դեմ գործողությունների միջազգային օր» բանաձեւի 26 համահեղինակներից մեկը:

Ի դեպ, Հայաստանը, ինչպես նաեւ Ղազախստանը, հանդիսանում են Միջուկային զենքի չտարածման պայմանագրի անդամ (NPT)՝ միջազգային ակտ, որը մշակվել է ՄԱԿ-ի Զինաթափման հարցերով հանձնաժողովի կողմից միջուկային զենք ունեցող երկրների ցանկի ընդլայնման ճանապարհին ամուր պատնեշ դնելու նպատակով: 1996 թ. Հայաստանը ստորագրել, իսկ 2006թ. վավերացրել է Միջուկային փորձարկումների համապարփակ արգելման պայմանագիրը:

Այսօր Ղազախստանը շարունակում է կոչ անել երկրներին, որոնք չեն վավերացրել կամ չեն ստորագրել Միջուկային փորձարկումների համապարփակ արգելման պայմանագիրը (ՄՓՀԱՊ) որքան հնարավոր է արագ քայլեր ձեռնարկել դեպի միջուկային զենքից ազատ աշխարհ: Ղազախստանը միացել է «Ութի խումբ» երկրների հետ Գլոբալ համագործակցությանը (G-8)՝ զանգվածային ոչնչացման զենքի տարածման դեմ ուղղված պայքարում: Այն երկիրը, որը հանդիսանում էր աշխարհում ամենամեծ միջուկային զինանոցի տերը եւ կարող էր լինել աշխարհի ամենախոշոր միջուկային տերությունների շարքում, ոչ միայն ինքնակամ հրաժարվեց նրանից, այլ նաեւ դարձավ միջուկազերծ Երկիր մոլորակի համար ամենակտիվ փիառ անողը: Ղազախստանում կայացվեց որոշում, համապատասխան, ըստ Նազարբաեւի, «երրորդ հազարամյակի բանականության եւ բարոյականության մակարդակի»: 2012 թվականին Ղազախստանը նախաձեռնեց նոր նախագիծ՝ ԱՏՈՄ, որի նպատակն է ներգրավել ամբողջ աշխարհի մարդկանց միավորվելու հանուն միջուկային զենքի փորձարկման դադարեցման:

2015 թ. սեպտեմբերի 29-ին ելույթ ունենալով ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայի 70-րդ նստաշրջանում Ղազախստանի նախագահը կոչ արեց ընդունել միջուկային զենքերի վերացմանը եւ միջուկային զենքից զերծ աշխարհ ունենալու նպատակով ՄԱԿ-ի համընդհանուր հռչակագիրը: Նրա կարծիքով, «կարեւոր խնդիր է գլոբալ հակամիջուկային շարժման ստեղծումը: Մոլորակի յուրաքանչյուր անձ կարող է եւ պետք է նպաստի միջուկային փորձարկումների դեմ պայքարին»:

«Միջուկային փորձարկումները սպառնալիք են բոլորիս համար: Սա անցյալի խնդիրը չէ: Դա դատարկ սպառնալիք չէ, որը սպասում է մեզ ինչ-որ հեռավոր ապագայում: Միջուկային զենքի փորձարկումները ունեն սոսկալի հետեւանքներ: Ցավոք սրտի, այսօր շարունակվում են ծնվել երեխաներ բնածին ծանր անկանոնություններով այն պատճառով, որ իրենց ընտանիքի անդամները ենթարկվել են ճառագայթման, որը առաջացել է շատ տարիներ առաջ միջուկային զենքի փորձարկման արդյունքում: Որքան երկար է աշխարհն ձգձգում ՄՓՀԱՊ վերջնական ընդունումը եւ ուժի մեջ մտնելը, այնքան մեծ է հավանականությունը, որ մարդկությունը կիմանա թե ինչ են ռադիոակտիվ տեղումներները ոչ թե գրքերից, այլ հենց ազդեցությունը իրենց վրա կզգան անմիջականորեն»,- ասում են ԱՏՈՄ նախագծի նախաձեռնողները:




Подпишись под электронной петицией на сайте www.theatomproject.org

«Գործեք հիմա: Դադարեցրեք միջուկային զենքի փորձարկումները»՝ սա՛ է Ատոմ նախագծի լեյտմոտիվը, որը նպաստում է իրական եւ կայուն փոփոխությունների՝ ներգրավելով ամբողջ աշխարհի մարդկանց միավորվելու հանուն միջուկային զենքի փորձարկման դադարեցման: Գաղափարի հեղինակները կոչ են անում աշխարհի բոլոր քաղաքացիներին ստորագրել պետիցիան եւ ասել իրենց «Ոչ»-ը աշխարհին, որտեղ կա դեռեւս միջուկային զենք:

**Եթե դուք միջուկային զենքից զերծ աշխարհի կողմնակից եք, աջակցեք Ղազախստանի նախաձեռնությանը եւ ավելացրեք ձեր ձայնը աշխարհի ավելի քան 200 000 ակտիվ քաղաքացիների ձայներին, ում համար աշխարհը պետք է առանց միջուկային սպառնալիքների, ավելի ապահով եւ ավելի մարդասիրական աշխարհ...**

ԱՆՆԱ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

# Արդյոք ովքե՞ր են

Հոկտեմբերի 12-ին Երեւանում մի շարք քաղաքական, քաղաքացիական, կամ ավելի ճիշտ՝ կիսաքաղաքական ուժերի աջակցությամբ եւ մասնակցությամբ հիմնադրվեց «Նոր Հայաստան» անունը կրող ճակատը: Այն արդեն ունի իր երկու փոքր, կամ մեկ մեծ նպատակ-նպատակները. արտահերթ նախագահական ընտրությունների կայացում, արտահերթ խորհրդարանական ընտրությունների կայացում:

Փաստորեն նոր Հայաստանը, ըստ ճակատի հիմնադիր-անդամների, հնարավոր է բացառապես այս երկու նպատակներին հասնելուց հետո, եւ կամ՝ երբ երկրում տեղի ունենան արտահերթ նախագահական եւ խորհրդարանական ընտրություններ՝ կգա նոր Հայաստանը: Հասկանալի է, որ ճակատի անդամները հենց իրենք են բերելու այդ նոր Հայաստանը եւ ուրեմն նրանք լրիվ նոր, կամ նորացված մարդիկ պետք է լինեն:

«Նոր Հայաստան» ճակատում են «Հիմնադիր խորհրդարանը», «Ոտքի, Հայաստան» նախաձեռնությունը, «Ժողովրդավարական հայրենիք» կուսակցությունը, «Ժառանգություն» կուսակցությունը եւ ԱԻՄ-ը, սակայն վերջինս բավարարվում է դիտորդի կարգավիճակով: Այսինքն նոր Հայաստանը բերելու են համապատասխանաբար՝ Ժիրայր Սեֆիլյանը, Անդրիաս Ղուկասյանը, Պետրոս Մակեյանը, Րաֆֆի Հովհաննիսյանը եւ այդ ամենը գրեթե մասնակցության մակարդակի դիտորդելու է Պարույր Հայրիկյանը: Չմոռանանք նաեւ Քաղաքագետների միության նախագահ Հմայակ Հովհաննիսյանին, ով նույնպես «Նոր Հայաստան»-ում է:

Սեֆիլյանենք, հիշեցնեմ, դեռ չեն ավարտել Հայաստանի ներսում «ազգային-ազատագրական շարժումը», եւ տրամաբանում եմ, որ նոր Հայաստանը գոնե «Հիմնադիր խորհրդարան»-ի մասով գալու է հենց այդ շարժման հաղթական ավարտից հետո: Հետեւաբար նոր Հայաստան կերտելու ճանապարհին «Հիմնադիր խորհրդարան»-ի վրա դրված է ներհայաստանյան ազգային-ազատագրական պայքարը: Անդրիաս Ղուկասյանի, ով հայտնի է նախագահական վերջին ընտրություններին իր մասնակցությամբ, որի ողջ ընթացքում, հացադուլ արեց, սակայն միայն հացադուլ արեց, տրամաբանում եմ՝ պատասխանատու է Հայաստանը ոտքի հանելու եւ ազգային-ազատագրական պայքարի լծելու գործի համար: Դրանից հետո արդեն, ոտքի ելածները պետք է անցնեն Սեֆիլյանի հրամանատարությանը, ով... արդեն ասացինք: Պետրոս Մակեյանի գործը, կրկին տրամաբանում ենք, սկսվելու է ավելի ուշ, երբ Ղուկասյանն ու Սեֆիլյանը հաջողությամբ ավարտեն իրենցը եւ սկսվեն ժողովրդավարական հայրենիք կառուցելու աշխատանքները, ինչի շրջանակներում էլ հավանաբար կարիք լինի նոր Սահմանադրություն գրելու: Հենց այս «հավանաբար»-ի պատճառով էլ Հայրիկյանը դեռ դիտորդի կարգավիճակով է հետեւում այս գործընթացին, քանի որ դեռեւս հստակ չէ, թե «նոր հայաստանցիները» նոր սահմանադրությո՞ւն են գրելու: Եթե որոշեն գրել, ապա Հայրիկյանն անմիջապես կվերաձեւակերպվի «Նոր Հայաստանի ակտիվ անդամ» եւ կղեկավարի նոր Սահմանադրություն գրելու աշխատանքները, դրա հիմքում դնելով իր հեղինակած «Բացարձակ ժողովրդավարություն» գիրքը: Հավատացողներ կլինեն գուցե, նկատի ունեմ՝ բացարձակ ժողովրդավարություն ասվածին:

Փոքր-ինչ դժվար է պատկերացնել այս գործընթացում Րաֆֆի Հովհաննիսյանի դերը, սա հատկապես դժվար է պատկերացնել, քանի որ պարոն Հովհաննիսյանը առաջին անգամ չէ, որ նոր Հայաստան է խոստանում, ինչին մեռանք սպասելով: Ենթադրում եմ, որ նա կա՛մ աղոթելու է՝ հանուն շարժման հաղթանակի, կա՛մ էլ լինելու է շարժման գլխավոր ֆինանսական դոնորը, իսկ շարժման հնարավոր տապալման պարագայում ինքն ու Անդրիաս Ղուկասյանը կանցնեն ավանդական հացադուլի:

Ինչ վերաբերում է Հմայակ Հովհաննիսյանին, ապա արդարության համար նկատենք, որ կոնկրետ նրա պարագայում ոչ այնքան շարժումն է շահագրգռված եղել այդ համագործակցությամբ, որքան Հմայակ Հովհաննիսյանն ինքը: Դե, երկրում քաղաքագետները շատացել են, սկսել են չմիանալ Քաղաքագետների միությանը, եւ կամ չընդունել Հովհաննիսյանի նախագահությունը, չլսել վերջինիս, իսկ նա էլ, քանի որ մշտապես խոսելու տեղի կարիք ունի, գտել է այդ տեղը՝ նոր տեղը «Նոր Հայաստան»-ում:

Դե ինչ, հաջողություն ենք մաղթում վերոհիշյալ պարոններին եւ ոչ միայն նրանց՝ իրենց նպատակների իրագործման մեջ, իսկ անձամբ Րաֆֆի Հովհաննիսյանին խնդրում ենք հաջորդ անգամ, երբ «Նոր Հայաստան»-ի հավաք լինի, հետաձգեք Ձեր անձնական գործերը, մի մեկնեք անձնական գործերով ԱՄՆ, քանի որ ամեն մի անձնական գործ ավելի քիչ նշանակություն ունի, քան նոր Հայաստանի ստեղծումը:

ՀՈՎԻԿ ԱՖՅԱՆ

AZG NEW SHABAT 1.QXD 15/10/2015 22:25 Page 10



# Ծովում ԱՄՆ-ի տիրապետությունը թերեւս հարցականի տակ է



Աշխարհում ամերիկյան ծովուժի գերիշխանությունը մինչեւ վերջերս անվիճելի էր: Երբ օրերս Կասպից ծովում գտնվող ռուսական ռազմանավից թեւավոր հրթիռներ արձակվեցին «Իսլամական պետության» վրա եւ թիրախները խոցեցին, ԱՄՆ ծովուժի բացարձակ տիրապետությունը հայտնվեց հարցականի տակ: Ռուսաստանի նորագույն պատմության մեջ դա առաջին դեպքն էր, երբ ռազմանավից թեւավոր հրթիռ էր արձակվում այդքան հեռու: ԱՄՆ-ում CNN-ը անանուն աղբյուր վկայակոչելով ստահոդ լուրեր տարածեց, թե հրթիռներից չորսը իբր ընկել են Իրանի տարածքում եւ ավերածություններ պատճառել: Սակայն Մոսկվան եւ Թեհրանը պաշտոնապես հերքեցին այդ ապատեղեկատվությունը:

ՌԴ նախագահ Վլադիմիր Պուտինը «Ռոսիա 1» հեռուստաալիքին տված հարցազրույցում ասաց, որ «Կալիբր» կոչվող այդ հրթիռները ՌԴ զինված ուժերում առկա են 2012 թվականից: Դրանց հեռահարությունը 1,5 հազար կիլոմետր է, բայց դրանք գերճշգրիտ արդիական զինատեսակ են: Նա ավելացրել է, որ նախատեսվում է ամբողջ ռուսական բանակը վերազինել նման հրթիռներով, ինչպես նաեւ ցամաքային եւ օդային նորագույն տեխնիկայով: Այդ հրթիռները բարդ եւ արդյունավետ համալիրներ են:

Ռուսական լրատվամիջոցները հաղորդում են, որ թեւավոր հրթիռներն արձակվել են հոկտեմբերի 7-ին (ընդամենը 26 հատ): Իր հարցազրույցում Պուտինը ընդգծել է, որ Ռուսաստանն ունի նաեւ 4,5 հազար կմ հեռահարության հրթիռներ, ինչպիսիք կան ամերիկյան բանակի սպառազինության մեջ: Ավելին, ՌԴ-ում տվյալ զենքն ունի օդային բազավորում, ինչը թույլ է տալիս այդ հեռավորության վրա հարվածներ հասցնել հենց Ռուսաստանի տարածքից:

«Ռոսիյսկայա գազետա» թերթի փորձագետ Յուրի Գավրիլովը «Կալիբր» թեւավոր հրթիռների արձակման կապակցությամբ նշում է, որ դրանք կարող են հաղթահարել հակաօդային եւ հակահրթիռային պաշտպանության ամեն մի համակարգ: «Թռիչքը տեղի է ունենում 50-ից մինչեւ 150 մետր բարձրության վրա, իսկ թիրախին մոտենալիս հրթիռն իջնում է մինչեւ քսան մետր եւ հասցնում անկասելի հարված», գրում է փորձագետը:

Եվրոպայում ամերիկյան ծովուժի հրամանատար, ծովակալ Մարկ Ֆերգյուսոնը վերջերս երկյուղներ էր արտահայտել ՌԴ ծովուժի հզորության եւ ՆԱՏՕ-ին սպառնացող վտանգի կապակցությամբ: Defense News էլեկտրոնային հրատարակությունը մեջբերում է ծովակալի այն խոսքը, որ վտանգի դրսեւորումներից մեկը Ռուսաստանի մշտական ներկայությունն է Միջերկրական ծովում: «Արկտիկայի ռազմակայաններից մինչեւ Լենինգրադ, Բալթիկ ծովում եւ Ղրիմում Ռուսաստանը տեղակայել է հակաօդային պաշտպանության եւ թեւավոր հրթիռների արդիական համակարգեր», նշել է Ֆերգյուսոնը:

ՌԴ Համակարգային վերլուծության եւ կանխատեսման կենտրոնի նախագահ Ռոստիսլավ Իշչենկոյի խոսքերով, «Նախքան «Կալիբրի» արձակումը Վաշինգտոնը վստահ էր, թե Ռուսաստանն անկարող է ԱՄՆ-ի ուժային գործողություններին արդյունավետորեն դիմակայել առանց միջուկային զենքի կիրառության»: Այժմ ակնհայտ է, որ Կասպիական նավատորմիղը եւ Սեւծովյան նավատորմը ի վիճակի են իրենց ջրատարածքներից ամեն մի հակառակորդի ոչնչացնել Արեւելյան Միջերկրածովքում եւ Պարսից ծոցում, իսկ Բալթյան նավատորմը կարող է թիրախ դարձնել Հյուսիսային ծովը, Լա Մանշը եւ Նորվեգական ծովի մի մասը, նշել է Իշչենկոն, որի խոսքերը մեջբերում է ՌԻԱ գործակալությունը:

«Նկատի ունենալով, որ Հյուսիսային նավատորմը ի վիճակի է վերահսկել Հյուսիսային Ատլանտիկան, իսկ Խաղաղօվկիանոսյան նավատորմը կարող է խոցել Հավայան կղզիներից հյուսիս Խաղաղ օվկիանոսում նավարկող ամեն ինչ, ԱՄՆ ծովուժը այլեւս անկարող է սպառնալիք ստեղծել Եվրասիայի ափերի համար: Քանի որ հրթիռային համազարկերը կարող են տրվել մի քանի հազար կիլոմետր հեռու գտնվող աննշան նավերից, ամերիկացի ծովայինները հրթիռները կտեսնեն միայն անկման պահին կամ դրանից քիչ առաջ: Պարզապես չեն հասցնի պաշտպանվել», վստահ է Իշչենկոն:

Սակայն փորձագետ եւ քաղաքագետ Անատոլի Նեսմիյանը առավել զուսպ է իր գնահատականների մեջ: Ռուսական ռազմանավերի գերակշիռ մեծամասնությունը կառուցված է ԽՍՀՄ-ում, այդ թվում միակ ավիակիր հածանավ «Ադմիրալ Կուզնեցովը» եւ Սեւծովյան նավարար մի դրոշակակիր «Մոսկվա» հրթիռակիր հածանավը: Վերջինս այժմ ՌԴ միջերկրածովյան նավախմբի կազմում է: Նավերի զգալի մասը բարոյապես ու ֆիզիկապես հնացած է, մի մասը նորոգվում է: ՌԴ ծովուժի կազմում առավել հզոր են սեւծովյան եւ Հյուսիսային նավատորմերը, ամենից վատ սպառազինված է Բալթյան նավատորմը:

ԱՄՆ ծովուժը ունի 11 ավիակիր, որոնցից երեքը ջրարկվել են 2003-2013 թթ.: Ամերիկացիները ռուսներին լրջորեն գերազանցում են էսկադրային ականակիրների, հրթիռակիր հածանավերի եւ սուզանավերի գծով: Դրանց զգալի մասը նոր է: Ներկայումս ԱՄՆ-ում կառուցվում է եւս երկու ավիակիր: Ամերիկյան բազմաթիվ ռազմանավեր զինված են «Թոմահավկ» թեւավոր հրթիռներով, որոնց հեռահարությունը 2,5 հազար կիլոմետր է:

Ռազմավարությունների եւ տեխնոլոգիաների վերլուծության կենտրոնի փորձագետ Վասիլի Կաշինը «Գազետա.ռու» էլեկտրոնային հրատարակությանը տված հարցազրույցում նշել է, որ ամերիկյան ծովուժն ունի քանակական գերազանցություն, բայց Ռուսաստանը պետք է փորձի ստեղծել համանման ռազմածովային ուժեր: «Մեր աշխարհագրական դիրքն ուրիշ է: Ինչպես ցույց է տալիս պատմությունը, մեզ սպառնացող գլխավոր վտանգները կապված են ցամաքային ուղղությունների հետ: Ռուսաստանի ապագայի հարցերը այնուամենայնիվ մշտապես լուծվել են ցամաքում», ընդգծել է Կաշինը:

**Պատրաստեց Պ. ՔԵՇԻՇՅԱՆԸ**

# Բայկոնուրից կարձակվի թուրքական արբանյակ

«Ռոսկոսմոսի» հաղորդման համաձայն, հոկտեմբերի 16-ին, Մոսկվայի ժամանակով 23-ն անց 40 րոպեին «Բայկոնուր» տիեզերակայանից «Պրոտոն» մղիչ հրթիռի միջոցով կարձակվի թուրքական Turksat-4B տիեզերական սարքը: Դա ճապոնական «Միցուբիշի էլեկտրիկ» կորպորացիայի (MELCO) ստեղծած երկրորդ հեռահաղորդակցական տիեզերական սարքն է արբանյակային կապի թուրքական օպերատոր Turksat Satellite Communication, Cable TV and Operation A.S.-ի համար: Նոր արբանյակը հեռարձակման եւ լայնաշերտ կապի ծառայությունների տրամադրումը կապահովի Թուրքիայի տարածքում, Եվրոպայում, Կենտրոնական Ասիայում, Աֆրիկայում եւ Մերձավոր Արեւելքում: Turksat-4B-ն գեոստացիոնար ուղեծրում կտեղադրվի արեւելյան երկայնության 50 աստիճանի կայանակետում:

**Պ. Ք.**

# Երկխոսության հնարավորություն Սիրիայում

## *ՌԴ ընտրովի փոխգործողության քաղաքականությունը*

ՌԴ օդուժը շարունակում է Սիրիայի տարածքում ռմբակոծել ահաբեկիչների օբյեկտները, ընդ որում հարվածներ հասցվում են ոչ միայն «Իսլամական պետությանը», այլեւ Բաշար Ասադին դիմակայող մյուս խմբավորումներին: Սիրիական բանակը անցել է նաեւ հարձակողական գործողությունների, թշնամուն հետ մղելով դեպի Թուրքիայի եւ Հորդանանի սահմանները:

Քանի որ ռազմական գործողության արդյունքները առանձնակի կասկածներ չեն հարուցում, այժմ ինտրիգը տեղափոխվել է դիվանագիտական հարթություն: Եվրոմիությունը Ռուսաստանին առաջարկում է իր գործողությունները համաձայնեցնել միջազգային լայն կոալիցիայի հետ եւ պայքարել հանուն ընդհանուր նպատակի, այն է՝ Սիրիական հարցին մասնակից բոլոր ուժերի քաղաքական երկխոսության հաստատման: Այդ մասին հայտարարել է ԵՄ արտաքին քաղաքականության գծով գերագույն հանձնակատար Ֆեդերիկա Մոգերինին ԵՄ արտգործնախարարների խորհրդի նիստից հետո:

Ռուսաստանը դրան դեմ չէ եւ քանիցս պատրաստակամություն է հայտնել համագործակցելու հակաահաբեկչական պայքարով շահագրգռված բոլոր ուժերի հետ: ՌԴ արտգործնախարար Սերգեյ Լավրովի խոսքերով, հնարավոր է համագործակցել նույնիսկ սիրիական աշխարհիկ ընդդիմության ներկայացուցիչների հետ, որոնք «մերժում են ահաբեկչական մեթոդներն ու գաղափարախոսությունը»:

Լավրովը կարծում է, որ Սիրիայում հակաահաբեկչական պայքարի քայլերի համակրումից բացի, հնարավոր է ընդդիմության այդ հայրենասիրական ջոկատներին ներգրավել քաղաքական բանակցությունների պայմանների նախապատրաստման ջանքերի մեջ:

ՌԴ նախագահ Վլադիմիր Պուտինի խոսքերով, Սիրիայի քաղաքացիական պատերազմին ռուսական օդուժի միջամտության պատճառներից մեկը հենց միջսիրիական երկխոսությունը խթանելու ձգտումն է: «Երբ մայրաքաղաքի մոտերքում «Իսլամական պետության» ահաբեկիչներն ու նրանց նմաններն են, Սիրիայի գրեթե պաշարված իշխանությունների հետ համաձայնության գալու որեւէ ցանկություն երեւի չի ծագում: Եվ ընդհակառակը, եթե սիրիական բանակը ցուցադրի իր կենսունակությունը եւ ահաբեկիչների դեմ պայքարելու պատրաստակամությունը, ցույց տա, որ իշխանությունը կարող է դա անել, այդ ժամանակ քաղաքական փոխզիջումների հասնելու հնարավորություններն էլ անհամեմատ շատ կլինեն», ասել է ՌԴ նախագահը:

Բացի դրանից ՌԴ ղեկավարները հասկանում են, որ սիրիական գործարքը Սիրիայի քիմիական զենքի պատմությունից հետո Ռուսաստանի եւ հավաքական Արեւմուտքի արդյունավետ համագործակցության փաստորեն առաջին օրինակն է: «Այսօր մենք Արեւմուտքի հետ ընտրովի փոխգործողության նոր քաղաքականություն ենք վարում: Ոմանք դա անվանում են համագործակցության-մրցակցության շատ նեղ շրջանակ», հայտարարել է Պետդումայի արտաքին գործերի հանձնախմբի նախագահ Ալեքսեյ Պուշկովը: «Ընտրովի փոխգործողության» քաղաքականությունը ամենաառաջին քայլն է կառուցողական հարաբերությունների ձեւավորման ճանապարհին, որի վրա վաղուց պետք է կանգնած լինեին Ռուսաստանը եւ ԱՄՆ-ը:

ԱՄՆ-ից եւ ԵՄ-ից բացի, Սիրիայի հակամարտության մեջ շահեր ունի նաեւ Սաուդյան Արաբիան, որը Մոսկվան պարզապես անտեսում է: Սաուդցիները դրանից դժգոհ են, եւ Վլադիմիր Պուտինի հետ հանդիպման ժամանակ Սաուդյան Արաբիայի պաշտպանության նախարար եւ արքայազն Մուհամմադ բին Սալմանը նախազգուշացրեց Սիրիայում ՌԴ ռազմական գործողության «վտանգավոր հետեւանքների» մասին:

Որոշ վտանգավոր հետեւանքներ ԱԴԾ-ն թերեւս արդեն կանխել է (օրերս բռնված մի խումբ ահաբեկիչներ որոշել էին պայթյուն կազմակերպել Մոսկվայում): Ուրիշ հետեւանք կարող է լինել Ծոցի երկրների կողմից գրոհայիններին նոր զինատեսակների (օրինակ՝ հակատանկային համակարգերի) հանձնումը: Գուցե սաուդցիները հորինեն Մոսկվայի եւ Բաշար Ասադի վարչակարգի կյանքը բարդացնող այլ եղանակներ: Սակայն նրանք անկարող են Ռուսաստանին ստիպել փոխելու մոտեցումը Սիրիայի հանդեպ: Ռուսաստանը եւ Արեւմուտքը Սիրիայի նախագահի եւ ընդդիմության ճակատագրերը որոշել են առանց Սաուդյան Արաբիայի, նշում է «Էքսպերտ.ռու» կայքէջը: Պատճառը ոչ թե վերջինիս չհարգելն է, այլ այն, որ կողմերը նրան համարում են քայքայիչ ուժ, որին վտանգավոր է ներգրավել նույնիսկ բանակցությունների մեջ: Այս հիմքի վրա սաուդցիներին արդեն երկրորդ անգամ դուրս են թողնում տարածաշրջանային կարեւորագույն գործընթացներից. առաջինը Իրանի միջուկային գործարքն էր: ԱՄՆ-ի ու Եվրոպայի նմանօրինակ վարքագիծը Սաուդյան Արաբիային պետք է ստիպի լավ մտածել տարածաշրջանում իր գործողությունների մասին:

**Պ. Ք.**

# Ինչու է Եվրոպան բղավում «ռուսական զավթումների» մասին

## *Պատասխանը տալիս է... Դոստոեւսկին*

Ճիշտ 14 տարի առաջ Աֆղանստանում սկսվեց «Անսասանելի ազատություն» հակաահաբեկչական գործողությունը: Օդային եւ հրթիռային հարվածներ հասցվեցին Քաբուլում, Ղանդահարում եւ Ջելալաբադում թալիբների հրամանատարական կետերին, ահաբեկիչների պատրաստման ճամբարներին, օդանավակայաններին եւ հակաօդային պաշտպանության միջոցներին: Դրան պետք է հաջորդեր ցամաքային գործողություն:

Աֆղանստանում չկային ռազմական օբյեկտներ եւ հակաօդային պաշտպանության միջոցներ՝ դրանց հանրաճանաչ իմաստով, իսկ լեռներում շարժական զենիթային կայանքները, հենակետերն ու զինամթերքի պահեստները ոչնչացնելը դժվար է նույնիսկ գերճշգրիտ զենքով: Ամերիկացիները հասկանում էին, որ միայն օդային ու հրթիռային հարվածներով վերջնական դրական արդյունքի հասնելն անհնար է:

Անհրաժեշտ էր ցամաքային գործողությունը, ինչը կապված էր մեծ դժվարությունների հետ եւ հղի էր անկանխատեսելի հետեւանքներով: Բարդություններ ծագեցին խմբավորման ծավալման հարցում: Տարածաշրջանում ԱՄՆ-ի գլխավոր դաշնակից Պակիստանի ղեկավարությունը ծանր կացության մեջ հայտնվեց փուշտունական ցեղերի հակաամերիկյան ելույթների պատճառով, իսկ Իրանը եւ Թուրքմենստանը հրաժարվեցին իրենց տարածքները տրամադրել ամերիկյան զորքերի տեղաբաշխման համար: Տաջիկստանից եւ Ուզբեկստանից թալիբների հենակետերը ոչնչացնելու համար հարկ կլիներ հաղթահարել Աֆղանստանի տարածքի մեծ մասը, ինչը կհանգեցներ հավելյալ կորուստների: Աֆղանստանում թալիբների դեմ միակ ռեալ ուժը կլիներ «Հյուսիսային դաշինքը», բայց ամերիկացիները բավարար ազդեցություն չունեին դրա ղեկավարության վրա: Նկատի ունենալով, որ Ռուսաստանն օժանդակում է «Հյուսիսային դաշինքին», ԱՄՆ-ի նախագահ Ջորջ Բուշը Շանհայի հանդիպման ժամանակ օգնության խնդրանքով դիմեց ՌԴ նախագահ Վլադիմիր Պուտինին:

Մոսկվան ըմբռնումով վերաբերվեց 2001 թ. սեպտեմբերի 11-ի դեպքերին, երբ ԱՄՆ-ում զոհվեցին հազարավոր անմեղ մարդիկ: Ռուսաստանը գիտեր, թե ինչ է ահաբեկչությունը: Ու թեեւ Աֆղանստանի գործողության իրավական ապահովման առումով մնում էին շատ հարցեր, թեեւ ՄԱԿ-ում ԱՄՆ-ի դեսպանը 2001 թ. հոկտեմբերի Անվտանգության խորհրդին հանձնած հատուկ ուղերձում նախազգուշացրել էր, որ ամերիկացիներն իրենց իրավունք են վերապահում հարվածելու համաշխարհային ահաբեկչության մասնակից ամեն մի երկրի կամ խմբավորման, նախագահ Պուտինը պաշտպանեց ԱՄՆ-ի գործողությունները:

Ռուսաստանի օդային տարածքը տրամադրվեց ամերիկյան ռազմափոխադրական ինքնաթիռների թռիչքներին: Պուտինը խորհրդակցեց Ուզբեկստանի եւ Տաջիկստանի ղեկավարների հետ, որոնք իրենց ավիացիոն բազաները տրամադրեցին ամերիկյան զորքերին: Դուշանբեում Պուտինը հանդիպեց Բուրհանուդդին Ռաբբանիի եւ «Հյուսիսային դաշինքի» մյուս առաջնորդների հետ՝ նրանց համոզելով, որ հարկավոր է ամերիկացիների հետ համագործակցել թալիբների դեմ համատեղ պայքարելու համար:

Այս ամենի հիշեցման պատճառը ներկայիս հակառուսական հուժկու արշավն է, որը արտասահմանյան ԶԼՄ-ներում ծավալվել է «Իսլամական պետության» դեմ սկսված ռազմաօդային գործողության կապակցությամբ: Գործողությունն իրականացվում է պաշտոնական Դամասկոսի խնդրանքով: Արեւմուտքի քարոզչության ապատեղեկատվությունը, հիստերիան եւ անթաքույց ստահոդությունը ԱՄՆ-ի եւ իր դաշնակիցների աշխատանքի արդյունքն է: Գերմանական ARD առաջին ալիքի հաղորդումներում ՌԴ օդային հարվածների թեման առիթ դարձավ Գերմանիայի բնակիչներին կրկին հիշեցնելու, թե նրանց աչքին ինչպիսի «համաշխարհային չարիք» պետք է լինի Ռուսաստանը: Այնինչ մինչեւ վերջերս Ռուսաստանն ու Գերմանիան սերտորեն համագործակցում էին ՌԴ-ՆԱՏՕ, ՌԴ-ԵՄ գագաթաժողովների, «Պետերբուրգյան երկխոսություն» քաղաքացիական համաժողովի գծով: Իսկ այսօր կասեցված են այդ բոլոր շփումները: Ռուսաստանում Գերմանիայի դեսպան Ռյուդիգե ֆոն Ֆրիչը գերմանա-ռուսական հարաբերություններին նվիրված մոսկովյան միջազգային կոնֆերանսում հայտարարեց, որ իր երկիրը պատրաստ է «երկխոսություն վարել, համատեղ քննարկում անցկացնել», բայց նաեւ պաշտպանեց Արեւմուտքի հակառուսական պատժամիջոցները, Բեռլինի դիրքորոշումը պատճառաբանելով «վճռականության դրսեւորման մեջ» Արեւմուտքի համախմբման ցուցադրությամբ:

Ֆյոդոր Դոստոեւսկին վրդովվում էր, որ եվրոպացիները չգիտեն եւ չեն հասկանում Ռուսաստանը եւ ռուս ժողովրդին, ատում են Ռուսաստանը՝ վախենալով նրա ուժից: Դեռ 19-րդ դարում նա ահա թե ինչպես է բնութագրել եվրոպացի ղեկավարներին. «Եվրոպայում բղավում են «ռուսական զավթումների, ռուսական նենգության» մասին, բայց դա արվում է միայն սեփական ամբոխին հարկ եղած դեպքում վախեցնելու համար, իսկ իրենք՝ ճղճղանները դրան բնավ չեն հավատում, ասենք երբեք չեն էլ հավատացել: Ընդհակառակը, այժմ Ռուսաստանի կերպարանքում նրանց շփոթեցնում եւ վախեցնում է ինչ-որ ճշմարտացի, ինչ-որ չափազանց անշահախնդիր ու ազնիվ բան, որը խորշում է թե՛ զավթումից եւ թե՛ կաշառքից: Նրանք կանխազգում են, որ այդ երկրին անհնար է կաշառել եւ քաղաքական որեւէ օգուտով ներքաշել շահախնդրական կամ բռնի գործի մեջ»:




Ժամանակին Ռուսաստանի առջեւ ծառացած էր չափազանց բարդ խնդիր. երկիրը դուրս բերել մեկուսացումից եւ վերականգնել նրա երբեմնի մեծության կարգավիճակը արտաքին քաղաքական ասպարեզում: Ռուսաստանը չէր կարող իրեն թույլ տալ ներքաշվելու եվրոպական լուրջ հակամարտության մեջ: Ուստի այդ նպատակին կարելի էր հասնել միայն հմուտ դիվանագիտությամբ, այն զուգորդելով ճիշտ հաշվարկի եւ երկաթյա տոկունության հետ: Ալեքսանդր 2-րդ ցարի օրոք ՌԴ արտաքին քաղաքական գերատեսչության ղեկավար, իշխան Ալեքսանդր Գորչակովը, ժամանակավորապես հրաժարվելով Եվրոպայի գործերին խառնվելուց, արտաբերեց մի խոսք, որն անմիջապես դարձավ թեւավոր. «Ասում են, թե Ռուսաստանը բարկանում է: Ոչ, Ռուսաստանը չի բարկանում, նա կենտրոնանում է»: Բայց արդեն 1860 թվականին իշխանը ի լուր աշխարհի հայտարարեց. «Ռուսաստանը դուրս է գալիս զսպվածության այն վիճակից, որը նա իր համար պարտադիր էր համարում Ղրիմի պատերազմից հետո»:

Պ. Ք.

# ԱՄՆ-ը հիասթափվել է ապստամբներից

**Պենտագոնը բարեփոխում է սիրիացի ապստամբների պատրաստման ծրագիրը: Մի քանի վարժաճամբարների փոխարեն ապագայում հավանաբար կմնա ընդամենը մեկ ուսումնական կենտրոն Թուրքիայում, որտեղ ընդդիմության առաջնորդները կյուրացնեն օպերատիվ մանյովրների ծրագիր: Փորձագետները կարծում են, որ ամերիկացիները պարզապես պահարկում են ծրագիրը, քանի որ նրանք դեռ չունեն մերձավորարեւելյան հետագա ռազմավարություն:**

**ԱՄՆ-ի նախագահ Բարաք Օբամայի վարչակազմը փակել է սիրիացի ապստամբների պատրաստման ու հանդերձավորման 500 մլն դոլարանոց ծրագիրը: Ինչպես հաղորդում է «Նյու Յորք թայմս» թերթը, ծրագիրը ցույց տվեց իր անարդյունավետությունը ցամաքային մարտունակ զորքերի պատրաստման գործում, որոնք կկարողանային դիմակայել «Իսլամական պետությանը»:**

**Լոնդոնում կազմակերպված ճեպասուլիսի ժամանակ ԱՄՆ-ի պաշտպանության նախարար Էշտոն Քարտերը հայտարարեց. «Ես դժգոհ եմ նախորդ փորձերից, ուստի մենք մշակել ենք ուրիշ մոտեցումներ: Կարծում եմ՝ շուտով դուք կլսեք նախագահ Օբամայի ծրագրի հետագա ճակատագրի մասին»:**

**«Նյու Յորք թայմսի» պենտագոնյան աղբյուրը հավաստացնում է, որ Հորդանանում, Քաթարում, Սաուդյան Արաբիայում կամ ԱՄԷ-ում վարժական ծրագրերի համար սիրիացի՝ այսպես կոչված չափավորական ասպտամբների հետագա հավաքագրում չի լինելու: Փոխարենը ընդդիմության առաջնորդների մի փոքր խումբ զանազան օպերատիվ մանյովրներ կսովորի Թուրքիայի տարածքում գտնվող կենտրոնում:**

**Թերթի տվյալներով, անցյալ շաբաթ նախագահ Օբաման անվտանգության եւ միջազգային քաղաքականության գծով իր խորհրդականների հետ երկու հանդիպումների ժամանակ հավանություն է տվել ռազմավարության փոփոխմանը: Սակայն նոր ուղեգծի մանրամասնությունները դեռ անհայտ են:**

**«Մի քանի հազար հետեւակայինների մարզումը սխալ մոդել էր: Կարծում եմ՝ դրանում կասկած չկա», ասել է «Նյու Յորք թայմսի» մեկ ուրիշ կառավարական աղբյուր: Նա գտնում է, որ վարժական ծրագիրը հետաձգված է, թեեւ ապագայում հնարավոր է դրա վերսկսումը:**

**Բացի դրանից, անցյալ շաբաթ մի քանի սենատոր նամակներ են գրել պետդեպարտամենտին, Պենտագոնին եւ ԿՀՎ-ին, երկյուղներ արտահայտելով, որ իրականում օգնություն է հասկացվում նրանց, ում դեմ նախապես ուղղված էր ծրագիրը:**

**Ամերիկյան կողմի տվյալներով, վարժանք անցած սիրիացի որոշ ապստամբներ իրենց հանդերձանքի եւ զինամթերքի մի մասը հանձնել են «Ան-Նուսրա ճակատ» իսլամիստական խմբավորմանը, որը կապված է «Ալ Ղաիդայի» հետ:**

**Նաեւ հաղորդվում է, որ ամերիկացի հրահանգիչների պատրաստած սիրիացի ընդդիմադիրների մի մասը սպանվել է, մի մասն էլ անցել է իսլամիստների կողմը:**

**«Իսլամական պետության» դեմ պայքարելու համար սիրիացի ապստամբների պատրաստություն սկսելու մասին հայտարարվել էր 2015 թ. մայիսի 8-ին:**



**Սկզբում խոսքը 90 կուրսանտի մասին էր: Պենտագոնը ծրագրում էր մինչեւ տարեվերջ հավաքագրել 3200 մարդու: Ենթադրվում էր, որ «աշակերտները» կստանան ամսական 250-400 դոլար՝ նայած իրենց հմտություններին, առաջնորդական հատկանիշներին եւ հաջողություններին:**

**Սակայն շուտով հենց ամերիկացի զինվորականները խոստովանեցին, որ ապստամբների պատրաստման կենտրոններն անարդյունավետ են: Այդ մասին սեպտեմբերի սկզբներին խոսեց մասնավորապես ԱՄՆ բանակի կենտրոնական հրամանատարության ղեկավար, գեներալ Լլոյդ Օսթինը Կոնգրեսում կայացած լսումների ժամանակ: Նրա խոսքերով, ամերիկացիների մարզած 54 սիրիացի ընդդիմադիրներից մարտունակ է մնացել 4-5 մարդ:**

**ՌԴ զինվորական քաղաքագետների ընկերակցության անդամ Ալեքսանդր Պերենջիեւը կարծում է, որ Պենտագոնը սկսում է վերանայել իր մերձավորարեւելյան ռազմավարությունը: Սակայն, դատելով ըստ ամենայնի, ԱՄՆ-ի իշխանությունները դեռ վերջնական պատկերացում չունեն, թե այն ինչպիսին պետք է լինի ապագայում:**

**«Փողերի հետագա ներդրումը հաջողություն չի բերի: Ամերիկացիներին ուզում են սպասել եւ գործի են դնում նախագծի ոչ թե իրականացման, այլ պահպանման համակարգը: Նոր ռազմավարություն չի մտածված, ուրեմն խոսքը դրա պահարկման մասին է», ասել է փորձագետը «Լենտա.ռու» կայքէջին տված հարցազրույցում:**

**Պերենջիեւի կարծիքով, սիրիական ընդդիմության հետագա մարզումը անիմաստ դարձավ Սիրիայում ՌԴ օդուժի գործողության պատճառով: Ռուսաստանի օգնությամբ Սիրիայի նախագահ Բաշար Ասադը մնում է իշխանության գլուխ: Նշանակում է՝ սիրիական ընդդիմության վրա խաղագումար դնելը դառնում է անշահութաբեր:**

**Պ. Ք.**

AZG NEW SHABAT 1.QXD 15/10/2015 22:25 Page 12



# Հայ աշակերտուհուն հանձնվեց Համաշխարհային փոստային միության հավաստագիրը



Համաշխարհային փոստային միությունը, որի անդամն է հանդիսանում Հայաստանի Հանրապետությունը, յուրաքանչյուր տարի հայտարարում է նամակագրության միջազգային մրցույթ, որի միջոցով լրացուցիչ քայլ է արվում խթանել աշխարհում նամակագրության դերը։

Այս տարի անց է կացվել 44-րդ նամակագրության միջազգային մրցույթը, որի թեման էր՝ «Այն աշխարհը, որտեղ ես կուզեի մեծանալ», որին մասնակցել են 9-15 տարեկան աշակերտները։

Մասնակցելով մրցույթին, Հայաստանի «Հայ կրթություն» կրթահամալիրի 8-րդ դասարանի աշակերտուհի **Տաթեւ Բարսեղյանը** արժանացավ միջազգային ժյուրիի հատուկ հավաստագրին։

Հոկտեմբերի 9-ին, փոստի միջազգային օրվա կապակցությամբ, Հայփոստի Նոր տեխնոլոգիաների զարգացման եւ ուսուցման կենտրոնում տեղի ունեցավ հավաստագրի հանձնման պաշտոնական արարողությունը։ Հավաստագիրը Տաթեւին հանձնեց «Հայփոստ Թրասթ Մենեջմենթ» ԲՎ գլխավոր տնօրեն Խուան Պաբլո Գեչիջյանը։

Այս կապակցությամբ մարվեց եւ շրջանառության մեջ մտցվեց «Հեռահաղորդակցության միջազգային միության 150-ամյակը» թեմային նվիրված նամականիշով բացիկը։ Մարման արարողությանը մասնակցեց նաեւ շնորհալի աշակերտուհին։

**«Հայփոստ» ՓԲԸ**
**«Հայփոստ Թրասթ Մենեջմենթ» ԲՎ**

# ՎիվաՍել-ՄՏՍ-ը Հայաստանում միկրոէլեկտրոնիկայի միջազգային ամենամյա օլիմպիադայի գլխավոր գործընկերն է



ՎիվաՍել-ՄՏՍ-ը կրկին Հայաստանում միկրոէլեկտրոնիկայի միջազգային 10-րդ ամենամյա օլիմպիադայի գլխավոր գործընկերն է։ Օլիմպիադայի եզրափակիչ փուլը կայացել է Երեւանի մաթեմատիկական մեքենաների գիտահետազոտական ինստիտուտում։ Օլիմպիադայի կազմակերպիչն է «Սինոփսիս Արմենիա» ընկերությունը։

Հայաստանի հեռահաղորդակցության առաջատար օպերատորն օլիմպիադայի գլխավոր գործընկերոջ դերն առաջին անգամ ստանձնել է 2010 թվականին՝ անցած վեց տարիների ընթացքում ամենամյա միջոցառման կազմակերպման համար նվիրաբերելով ավելի քան 54 միլիոն դրամ։ Օլիմպիադայի երիտասարդ մասնակիցներն այս տարի ներկայացրել են 29 երկիր. Հայաստան, Արցախ, Արգենտինա, Բելառուս, Բրազիլիա, Չիլի, Կոլումբիա, Չինաստան, Եգիպտոս, Վրաստան, Գերմանիա, Հոնգ Կոնգ, Հնդկաստան, Իրան, Իսրայել, Հորդանան, Մալայզիա, Պերու, Ֆիլիպիններ, Ռուսաստան, Սաուդյան Արաբիա, Սերբիա, Շվեյցարիա, Արաբական Միացյալ Էմիրություններ, Միացյալ Թագավորություն, Ուկրաինա, Ուրուգվայ, ԱՄՆ եւ Վիետնամ։

Օլիմպիադան զգալի դեր ունի միկրոէլեկտրոնիկայի ոլորտում կրթությանն աջակցելու հարցում եւ նպաստում է Հայաստանում եւ մասնակից երկրներում ոլորտի շարունակական զարգացմանը։ Զուգահեռաբար, այն օգնում է ճանաչել, գնահատել մինչեւ 30 տարեկան բազմաթիվ տաղանդավոր ինժեներների եւ խթանել միկրոէլեկտրոնիկայի ոլորտում նրանց առավել ակտիվ ներգրավվածությանը։ Ամենամյա միջոցառման նպատակը միկրոէլեկտրոնիկայի ասպարեզում երիտասարդ մասնագետների հանրույթն ընդլայնելն ու մասնակիցների գիտելիքների մակարդակը գնահատելն է։ Դա բխում է տարածաշրջանային կրթական ծրագրերն առկա պահանջներին համապատասխանեցնելու հրամայականից։

«Ցանկանում եմ ողջունել մեր հյուրերին՝ տաղանդավոր այս երիտասարդներին, ովքեր ժամանել են տարբեր երկրներից՝ հանուն առողջ մրցակցության։ Միկրոէլեկտրոնիկան գիտության այն ուղղություններից է, որը տաղանդավոր կադրերին թույլ կտա իրենց ներուժով նպաստել երկրի արդյունաբերության զարգացմանը։ Միկրոէլեկտրոնիկայի կրթության ոլորտում ընկերության երկարաժամկետ ներդրումը պայմանավորված է նրանով, որ միկրոէլեկտրոնիկայի, ՏՀՏ եւ հեռահաղորդակցության ոլորտներն ունեն կայուն տնտեսական զարգացման եւ առաջընթացի գերակա ուղղություններ դառնալու ներուժ, ինչպես եղել է մի շարք երկրներում։ Մենք իսկապես հպարտ ենք մասնակցելու մի նախաձեռնության, որն ունի երկրի հզորացմանը նպաստելու իսկայական ներուժ»,- ասել է ՎիվաՍել-ՄՏՍ-ի գլխավոր տնօրեն **Ռալֆ Յիրիկյանը**։

Օլիմպիադայի շրջանակում մրցույթային թեմաները ներառել են «Թվային IC նախագծումը եւ փորձարկումը», «Անալոգային եւ խառն ազդանշանային IC նախագծումը եւ փորձարկումը», «Կիսահաղորդիչ սարքերը եւ տեխնոլոգիաները», ինչպես նաեւ «Էլեկտրոնային նախագծային ավտոմատացման մաթեմատիկական եւ ալգորիթմային խնդիրները»։

Հայաստանում միկրոէլեկտրոնիկայի միջազգային 10-րդ օլիմպիադայի հաղթողներին մրցանակները հանձնվել են գալա-միջոցառման ընթացքում։ Առաջին տեղը զբաղեցնող մասնակիցը ՎիվաՍել-ՄՏՍ-ի կողմից ստացել է արժեքավոր մրցանակ։

# Տնաշինություն՝ կրակոցների տակ

## *ՎիվաՍել-ՄՏՍ-ը եւ Հայաստանի «Ֆուլեր Տնաշինական Կենտրոնը» տուն են կառուցում Տավուշի մարզում*

Տավուշի մարզի Ներքին Կարմիրաղբյուր գյուղը պետական սահմանից ընդամենը 1,5 կմ հեռավորության վրա է գտնվում։

Գյուղի դիրքն այն խոցելի է դարձնում հակառակորդի կողմից արձակվող կրակահերթերի համար։ Գյուղացիները, սակայն, հաստատակամ են եւ ուժեղ ավելի, քան երբեւէ։ Նրանք վստահ են, որ խաղաղ օրերը վաղ թե ուշ գալու են։ Եվ չնայած անհանգիստ ժամանակների բոլոր դժվարություններին, զբաղվում են խաղողագործությամբ, շարունակում մշակել իրենց հողը եւ ապացուցում, որ վճռականությունն ու հայրենիքը պաշտպանելու կամքն ավելի ամուր են։ Ներքին Կարմիրաղբյուրցիներն արդարացիորեն իրենց սահմանապահ են համարում։

Բաբկեն Ավագյանը շատ խորն է զգացել պատերազմի դառնությունը։ Նրա օջախի պատերը այդ օրերի լուռ վկան են դարձել. տարիներ առաջ արկի պայթյունից տան մի հատվածը գրեթե ամբողջովին քանդվել է։ Ավագյանները, սակայն, ոչ միայն չեն հուսահատվել, այլեւ աջակցող կազմակերպությունների հետ ձեռք-ձեռքի՝ շինարարություն են սկսել։ Տուն կառուցելու նրանց վաղեմի երազանքն իրականություն է դարձել ՎիվաՍել-ՄՏՍ-ի ու Հայաստանի «Ֆուլեր Տնաշինական Կենտրոնի» շնորհիվ։ Ֆինանսական աջակցությունից բացի, ՎիվաՍել-ՄՏՍ-ի գլխավոր տնօրեն Ռալֆ Յիրիկյանը, ընկերության աշխատակիցները, ինչպես նաեւ Հայաստանի «Ֆուլեր Տնաշինական Կենտրոնի» թիմը մասնակցել են Ավագյանների կիսակառույց տան շինարարությանը։

«Վերջին շրջանում հաճախակի դարձած կրակոցներն անգամ անկարող են կոտրել մեր ոգին։ Կրակոցներն այսքան ինտենսիվ չէին եղել 1993թ.-ից ի վեր։ Սակայն մեզ դրանով չեն վախեցնի. մենք պետք է կառուցենք ու ստեղծենք՝ որքան էլ կրակեն։ Թո՛ղ թշնամին իմանա, որ այստեղից ոչ մի տեղ չենք գնալու, սա է մեր տունը, սա է մեր հողը»,- ասել է Ներքին Կարմիրաղբյուր գյուղի բնակիչ **Բաբկեն Ավագյանը**։

«Այս այցելությունն առավելապես հոգեբանական նշանակություն ունի։ Ամեն մի հայ կարող է ինքնուրույն տուն կառուցել։ Կրակոցների տակ տուն կառուցելը, սակայն, այնքան էլ հեշտ չէ։ Սահմանամերձ գյուղերի բնակիչները պետք է զգան, որ մենակ չեն, որ ամուր թիկունք ունեն։ Մենք փորձում ենք նրանց այդ վստահությունը փոխանցել՝ անձամբ մասնակցելով իրենց տան շինարարությանը։ Շինարարական աշխատանքներից հետո մենք հեռանալու ենք այստեղից, իսկ Ավագյանները մնալու են՝ ամուր պահելով մեր սահմանը։ Պետք է կարողանանք գնահատել հողին տեր լինելու նրանց բարձր գիտակցությունը»,-ասել է ՎիվաՍել-ՄՏՍ-ի գլխավոր տնօրեն **Ռալֆ Յիրիկյանը**։

«Այս ընտանիքների յուրաքանչյուր անդամ հերոս է՝ մեծից փոքր։ Սահմանամերձ գյուղերի բնակիչների համար առօրյա խոսակցությունը կրակոցներն են ու զենքի տրամաչափը։ Այս մարդիկ ապրում են անդադար կրակի տակ, այգի են մշակում, աշխատանքի գնում, դպրոց տանում իրենց երեխաներին։ Նրանց ոգին իսկապես անկոտրում է։ Նվազագույնը, որ կարող ենք անել սահմանամերձ գյուղերի բնակիչների համար, կենցաղային տարրական հարմարություններ ապահովելն է»,- ասել է Հայաստանի «Ֆուլեր Տնաշինական Կենտրոնի» նախագահ **Աշոտ Եղիազարյանը**։

ՎիվաՍել-ՄՏՍ-ի եւ «Ֆուլեր Տնաշինական Կենտրոնի» համագործակցության շնորհիվ, միայն 2014թ.-ին Տավուշի մարզի սահմանամերձ գյուղերի 16 ընտանիք կարողացել է լուծել բնակարանային խնդիրը։ Մինչեւ տարեվերջ եւս 11 ընտանիք կապրի բարեկարգ պայմաններում։

Հիշեցնենք, որ ծրագրի իրականացման համար 2015թ.-ին ՎիվաՍել-ՄՏՍ-ը 100 մլն ՀՀ դրամի ներդրում է կատարել (2014թ.-ին՝ 55 մլն դրամ), իսկ Հայաստանի «Ֆուլեր Տնաշինական Կենտրոնը» իրականացնում է ծրագիրը։ Այս համագործակցության շնորհիվ՝ 2007թ.-ից մինչ օրս, հանրապետության տարբեր համայնքների 53 ընտանիք կացարանով է ապահովվել։ Տարեվերջին բարեկարգված կամ կիսակառույց տան շինարարությունը ավարտին հասցրած ընտանիքների թիվը կհասնի 93-ի։

# Խնդրում ենք օգնել

**Անժիկ Քերոբի Սարգսյանին** անհրաժեշտ է կոնքոսկրի խնձորակի ցավազրկող վիրահատություն եւ էնդոպրոթեզավորում, որն արժե մոտ 5000 դոլար։

Անժիկ Սարգսյանը 65 տարեկան է, երկար տարիներ աշխատել է Հայ առաքելական եկեղեցում, թոշակառու է, հիվանդության պատճառով գամված է անկողնուն, սոցիալապես անապահով է, ապրում է հանրակացարանում։ Խնդրում ենք բոլոր նրանց, ովքեր հնարավորություն ունեն օգնելու Անժիկ Սարգսյանին, դրամական փոխանցում կատարել «Հայ բիզնես բանկի» հետեւյալ հաշվեհամարին.

«Հայ բիզնես բանկ» 11500698519200

Հավաստիանալու կամ ճշտումների համար կարող եք դիմել հետեւյալ հեռախոսահամարին՝ 094614346։

**Ազգ-ը առաջարկում է գրահրատարակչական ծառայություններ**

«Ազգ»-ի խմբագրությունը ընդունում է գրքերի, գրքույկների, բրոշյուրների, ամսագրերի եւ տարեգրքերի՝

- **Խմբագրման**
- **Շարվածքի**
- **Սրբագրման**
- **Ձեւավորման**
- **Էջադրման**
- **պատվերներ արեւելահայերեն եւ արեւմտահայերեն, դասական եւ ժամանակակից հայաստանյան ուղղագրությամբ։**

Նաեւ՝

Խմբագրության բազմահմուտ աշխատակիցները կարող են ռուսերենից, անգլերենից, ֆրանսերենից, թուրքերենից եւ արաբերենից ոչ գեղարվեստական նյութերի թարգմանությունն ապահովել անթերի կերպով, ողջախոհ ժամկետներում։

**Հասցե՝ Հանրապետության 47, 3-րդ հարկ։**
**Հեռախոսներ՝ 58-29-60, 098-58-29-60, 060-27-11-15**
**Էլ. փոստ՝ arev@azg.am, azg@azg.am. ani.grigoryan.73@mail.ru**

«ԱԶԳ» ՇԱԲԱԹԱԹԵՐԹ
Հրատարակութեան ԻԳ տարի
Հիմնադիր եւ հրատարակիչ
**«ԱԶԳ ՕՐԱԹԵՐԹ» ՍՊԸ**
Երեւան 0010, Հանրապետութեան 47
e-mail: azg@azg.am, azg2@arminco.com
**www.azg.am**
Գլխաւոր խմբագիր
ՅԱԿՈԲ ԱՒԵՏԻՔԵԱՆ հեռ. 060 271117
Հաշուապահութիւն (գովազդ) հեռ. 582960, 060 271112
Լրագրողների սենեակ հեռ. 060 271118
Համակարգչ. ծառայութիւն հեռ. 060 271115
*Շուրջօրեայ լրահաւաք ծառայութիւն*
հեռ 060 271114, 010 529353
Համակարգչային շարուածքը՝ «Ազգ» թերթի

Թերթի նիւթերի ամբողջական թէ մասնակի արտատպումները տպագիր մամուլի միջոցով, ռադիոհեռուստատեսութեամբ կամ համացանցով, առանց խմբագրութեան գրաւոր համաձայնութեան խստիւ արգելւում են համաձայն ՀՀ հեղինակային իրաւունքի մասին օրէնքի։
Նիւթերը չեն գրախօսւում ու չեն վերադարձւում։
Գ տառով յօդուածները գովազդային են, որոնց բովանդակութեան համար խմբագրութիւնը պատասխանատուութիւն չի կրում։

"AZG" Weekly
Editor-in-chief
H.AVEDIKIAN / phone: 374 60 271117
47 Hanrapetoutian st., Yerevan, Armenia, 0010

ԳՈՎԱԶԴԻ ՀԱՄԱՐ ԶԱՆԳԱՀԱՐԵԼ՝ 58-29-60, 060 271112

Լրատուական գործունէութիւն իրականացնող՝ «Ազգ օրաթերթ» ՍՊԸ, Երեւան, Հանրապետութեան 47։ Պետական գրանցման վկայականի համարը՝ 04 Ա N 047261, տրուած՝ 25.02.00 թ.։
Թողարկման պատասխանատու, գլխ. խմբ. Յակոբ Աւետիքեան։ Ստորագրուած է տպագրութեան 15.10.2015, գինը՝ 200 դրամ, տպագրւում է «Տիգրան Մեծ» հրատարակչութեան տպարանում՝ Արշակունեաց 2։